


ՄԻՔԱՅԵԼ ԺԱՄԶԱՐՅԱՆ



ԼՔՎԱԾ ՏԱՆ
ԱՌԱՎՈՏԸ



ՄԻՔԱՅԵԼ ԺԱՄԶԱՐՅԱՆ

ԼՔՎԱԾ ՏԱՆ ԱՌԱՎՈՏԸ



ԵՐԵՎԱՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ»
1989

Նվիրում եմ քրոջս՝ ՇՈՂԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ լուսավոր հիշատակին:

Ժամհարյան Մ.Ս.

Լքված տան առավոտը: Պոեմ, բանաստեղծություններ
/Միքայել Ժամհարյան - Եր., Խորհրդ. գրող, 1989

«Լքված տան առավոտը» բանաստեղծությունների ժողովածուն երիտասարդ բանաստեղծի երախայրիքն է: Այն ամփոփում է հեղինակի յուրօրինակ հոգևոր աշխարհի ինքնասույգ վիճակներն ու ապրած կյանքի հանդեպ ունեցած խորհրդածությունները: Նրա պատկերների ինքնատիպ համակարգը սերտ աղերսներ ունի արևմտահայ պոեզիայի զուլալ ակունքների հետ: Ամենատարբեր երևույթների վերացարկումները նրա մոտ ծառայում են սեփական հայեցակետ մշակելուն՝ իրականության շրջանակներից դուրս չզալու պայմանով:



ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՁԱՅՆԻ ԵՎ ՀԱՎԱՏԻ

ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՁԱՅՆԻ ԵՎ ՀԱՎԱՏԻ

Չհասկացված մարդու սերն է այսօր պետք.

վերցրո՛ւ... ու մի՛ տրտնջա:

Կյանքդ թեթևացնող ձայնով ափսոսա ձեռքերս ընդառաջ պարզած
և հարազատներիս կարոտելու համար մի՛ տար ինձ օտարություն,
որովհետև ես ունեմ այն, ինչ տրվում է անհույս:

Հո՛ւյս տուր -

կարողանամ օծվել զվարթ խեղկատակներից,

կարողանամ վերադարձնել անփույթ օրերիս հմայքը,

որ պարզին է քո ամենամեծ:

Շուրթերս թող չբացվեն սրտի խոսքով,

թող ինձ սպասեն ոչինչ չթաքցնող գուշակները:
Ե՛լ, ճամփո՛րդ, կեսօրին հնազանդ,
որ ավագ խորհուրդն է քո:
Մի՛ մոռանա հարազատներիդ սերը,
մի մոռանա ինձ նրանցից դուրս:
Արտասվի՛ր երջանկության համար՝ բացվող դռների մոտ
և հավատա՛ ես սկսում եմ ծնվել,
երբ ոչ մի ձեռք չի տատանվում հանուն սիրո:
Միայն գեղեցիկ ասիեր է ունեցել իմ սիրտը,
երբ արյուն է ծածանել կամքը քո:
Դո՛ւրս ել, այս ամենի համար մի վերջին անգամ ծնկաչոք,
և հորիզոնը պահպանիր որպես նշան-
մոտայուտ ու աղմկարար ջրերի:
Տո՛ւր հոգսը նրանց –անդարձի սարսափով:
Չի դառնում այն, ինչ շնորհված է հետայսու և միշտ:
Այս ասիե՛րը հուսո... որտեղ նստեցի մի օր,
և իմ կյանքը հեռացավ ողբաձայն:
Ես նրանց ձոնեցի ձեռքերս –խուռներամ թռչուններով
և ապավինեցի բարեբեր ժամանակներին,
որտեղից խոսքն իմ – մշուշներին հարազատ
և արցունքս – ետ շրշվելուց առաջ արժանացան կյանքի:
Վա՛ռ պահիր հույսդ
և անսա՛ ինձ:
Ես չեմ կարող լսել այս լեռան բարձրության մասին առանց կախարդանքի,
համոզի՛ր ելնեմ բարձրությունը, համոզի՛ր.
գուցե օրերն են վերադարձել,
գուցե չկամ օրերի մեջ,
սակայն իմաստը միշտ մնում է փակ սրտի պես:
Թո՛ւյլ տուր՝ ապրեմ այս բարձրության այլայլումով.
այսպես կարող եմ և չմեռնել,
որովհետև չհասկացված մարդու սերն է այսօր պետք:
Ահա և ձայնը լսված -
ամենի պես ի՛նչ շուտ իջավ եղեգներին ողջակիզվող,
տա՛ր բոցերդ, չգանգատվեմ կուրությունից,
տո՛ւր բոցերդ – քեզ չմնան:
Եղեգների վրա արևները մայր են մտնում սիրո նման
և չեն բերում հպումը տրված սրտի:
Կա մի վայր, որտեղ ծերանում են ավստոսանքով,
Ես օտար եմ քո վայրերին հիմա և ընդմիշտ:
Վա՛ռ պահիր հույսդ
և անսա՛ ինձ,

որ երբ հեռանամ — հրաշք լինի սիրտս:
Հրաշք-հրաշք, պարզեմ ձեռքերս ոչնչի համար և ամեն ինչի:
Եվ ամեն ինչի վայրը անվանեմ քո անունով:
Ես հավատում եմ ձայնին
մութի մեջ խորացող մարդկային նշաններից:
Ո՛վ կանչեց հավասարությամբ միայնակի,
Ո՛վ տեսավ լուռ արտասվողին:
Եկել է մեկը գիշերով և նշմարում է գարդերը քեզ համար:
Բայց չէ՞ որ մարդկային նշաններով առեղծված էլ կա —
անկյունից անկյուն լցվող մութի:
Թող ինձ, օրերը ես տեսնում եմ ճանապարհների օրհնությամբ բարի,
Եկ՝ վերջին ու դատարկ գարդերդ թողնելու -
ի՛նչ դժվար է լինել երկուսով,
ի՛նչ դժվար է լինել ընդդեմ կամքի:
Հիշողությունը օտարացնում է երկուսին,
որովհետև պահը մեծ է քեզ լքելու համար:
Թող ինձ, այսպես մոտենում են ճակատագրի խոստումներին,
այսպես չեն հավատում:
Մութի առեղծված կա՞...
Ես չգիտեմ՝ հիմա ո՞վ է մնացել հատուկենտ գարդերով,
որովհետև առեղծվածն ունի սովորական պատկեր,
որ նվիրում են միայնակներին:
Սակայն այս մութը ձեր հաղթանակն էր, հավատացե՛ք,
ձայնը հասնում է միայն օգնությամբ,
եթե պահը մեծ է մնացածի համար:
Սակայն ես միայնակ եմ,
սակայն ես կատարյալ եմ, երբ ազգությունս որոշում են մի հայացքից:
Բացե՛ք դռները ցնծության բացականչություններով,
և կլինեմ ձերը, անծանոթ նվիրյալներ:
Ձեզ համար երգելով բարձրանում եմ:
Ահա ինչու խորհուրդը միակն է վտանգից խուսափողի համար:
Մի՛ շրջեք ինձ ավերակները պատմողի,
մի՛ կարոտեք լքած համերաշխությանը:
Այսպես հեռուներից գալիս են հրոսակներն արևելքի
և քեզ շրջում են խորհրդավոր ու անպատմելի:
Վերջապես կանգ է առնում տարօրինակ այս բարձրացողը,
երբ փակ աչքերով երագում է:
Անմահներից առաջ ես եմ իջել հողին -
դարձրե՛ք ինձ սովորական,
որովհետև ես կատարյալ եմ, երբ ոչ ոք չունի սպասելու մի կիրք
ոչ ոք չի տառապում ավելորդ ձգտումներից:

Անքնության պես ինձ բուժում է ազգությունս,
ապրեցե՛ք ինձանից հետո
և ամեն քայլիս համար մի կյանք թողեք-ինձ պատասխանատու:
Ես գնում եմ անկարելի տրորված հասկերի միջով,
և մարմինս թաց է նորելուկի նման:
Մի բուռ հողի համար ես կատարյալ եմ -
պահպանեցե՛ք ինձ ձեր հիվանդության համար:
Ոչ ոք դեռևս չի մահացել գուշակություններից —
վաղվա մեղքի դիմաց խոնարհ նստած մայրերի
և ամեն մի քայլի ծանրության համար:
Ինչն է դարձել երկունք պատահական,
որ մեր ցանկությունները եղան օտար իրար
և հեռանում ենք անհայտ ճամփաների տենչով:
Բա՛ց գաղտնիքդ, եկվո՛ւր,
չտեսնեմ քեզ ծանրության պես նեղող ճիչերի մեջ:
Ես սովոր եմ արթնանալ, երբ դուռս են ծեծում.
այդ պահին ձեռքերս զգում են սրբությունը հիշատակի,
այդ պահին բոլորն էլ մնում են դեմ դիմաց:
Անտարբերությունը փրկեք եզակի այն օրերի,
երբ ձեր սերը էլ պետք չէ չհասկացված մարդուն:
Բա՛ց գաղտնիքդ, եկվո՛ւր,
ես կքայլեմ մինչև աշխարհի ծայրը
և կյանքս կտամ հիացմունքից:

ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ԱՌԱՋ

Եվ երկար ճանապարհից առաջ ես ասացի՝
ինձանից հետո իմ որդիները միայն հաղթելու են,
և սրբազան պահը իմ արյունն է ողողելու:
Եվ ես ասացի՝
կարոտը դառնում է անտանելի,
երբ որդիները հնազանդ են թափված արյան համար.
գուցե խելագարության աղաղակները
լսվում են արդեն հեռավոր ճանապարհներից,
գուցե ոչինչ այնպես չի մոտենալու իմ արյանը,
սակայն ամեն օր դու արցունքոտ կհիշես,
որ հոգնած թևերով ես չկարողացա պահպանել զավակներին,
որ հեռացա,
հեռացա վաղուց անցած խմբերի հետ:
Նրանք սիրում են հարբել իմ ընկերների հետ,

որոնք պատմելու բան չեն ունենա,
որ անփույթ շարժումից սայթաքեն -
չգիտեմ արդեն որտեղ,
չգիտեմ արդեն ինչու:
Ձեր խմբերի մեջ ես եղա միակ օտարականը...
Իսկ դու արցունքոտ կհավատաս,
որ թներս,
հոգնել են թներս:
Երբևէ լինելու են իմ մտերմությունը, ցավը և տանող ուժը
աննշան բացվող մշուշի տխուր ուրվականները:
Այսպես փլուզվում են գմբեթները
քո երևակայության մեջ:
Ջավակներդ եկան-տեսան.
հոգու փրկության համար աղոթում են:
Ահա իմ բարի խոսքը,
ահա և ձեր տեսածը,
բայց ինչ էլ պատահի, դու գիտես,
դու գիտե՞ս՝ հոգնել են թներս,
թներս - պահպանելուց այս տարօրինակ անառակությունը,
որ բոլորը տեսնելու են միայն վերադարձից հետո,
որ միայն քեզ համար է:
Եվ երբ բոլորը տեսնեն, որ քոնն է,
ես կմնամ, կմնամ գիշերով խելագարվելու
փլուզվող գմբեթների շուրջ:
Եթե ուշ լինի, դու մի՛ տխրիր,
շուտով ուրիշ խմբեր են գալու հրաժարվող շարժումներով,
և անամոթ խոսքեր կասեն,
բայց հավատա՛
ես նրանց հետ չեմ լինի մերձիմահ:
Իսկ թե ինչ կասեն այս գիշեր ինձ ետ բերող բարի մարդիկ,
ես կլռեմ հանուն զավակներիս:
Արդեն վաղուց է՝ արև չի ծագում աշխարհում,
որովհետև ոչ ոք չի հավատում իմ խոսքերին:
Եվ ճանապարհից առաջ ես ասացի՝
ամուր, ավելի ամո՛ւր կանգնիր
ծանոթ գտնելու հույսով,
որն իր երազանքը համարում է քեզ հանդիպելը:
Եվ ես ասացի՝
քանի դեռ հեռու եմ, մոտ չեմ, օտարական եմ,
մի՛ ասա, թե ահա, ահա այս է,
այս է մարդու որդին,

որ իրենից հետո հասցրեց գավակներ թողնել,
ուրեմն հույսը մեծ է, մեծ է աշխարհը:
Եվ ոչ ոք չի իմանա այդ մասին,
և ոչ ոք այդ մասին չի հիշեցնելու ամեն օր,
որովհետև շուտով գալու է միակը սպասողների մեջ,
որ երջանիկ է այս օրերով,
որ այս օրերին չի հանդիպելու
օտարականների անտարբեր խմբերի:
Լռությունը այսուհետև կլինի մեծ —
ինձ համար, որ միակը եղա,
և քեզ համար, որ... կորցրիր:

ՀԱՆՃԱՐԵՂ ՀԱՅԱՅՔ ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ

Պահպանի՛ր աչքերս լուսանկարում վաղը դու,
Որ սրբես անդունդը — բոցավառվող քո փեշերով,
Երեկ ես սայթաքել եմ թռչնի պես թրջված օդում,
Այսօր իմ մագերից մի փունջ ձեռքիս կա գիշերով;
Հեռվում կա մի բաց դուռ, ինչպես գաղտնիք ճաքած սրտի,
Կա մի բաց դուռ, ինչպես վերջին օր աստղ մուրալու,
Մոլորվածին չեմ նկատում՝ հագած հուշը ցրտի,
Որ նստեմ նրա ստվերում աննկատ սուլելու:
...Ստվերս, ստվերս քո հեռավոր ննջարանում,
Հիացմունքի երկտող վետվետացող մութին խփված
Մի կյանք հեռու ձայնիս արձագանքն է դեռ չարանում,
Երկիր չունեցողի դանակահար թիկունքին բաց:
Իմ աչքերում կանգնած փոշին թվում է օտար խիճ
Եվ հուշում մի երկար ճանապարհ անցած գիշերով,
Ոտնակոխ ինձ հասնող ահա հայացքների շոինդ -
Դու ես գալիս, աղջիկ, որ դեմքս օծես փշերով:
Թող մնամ թագավոր, հեռավոր երկրի ուրվական,
Պատեպատ զարկվելիս ահերը այսօր շատ են թանկ,
Քեզ, աղջիկ, կսիրեմ, փողոցով մեկ ամեն անգամ -
Եկ այսօր գգվելիս կորածի աչքերով մեզ գթանք:
Դառնությունն այս համբուրելու համար շուրթեր չունի,
Անտարբեր հայացքիս դիմաց՝ մոլորվածի քայլեր,
Ցավս կծածկեն ընկնող փետուրները թռչունի,
Եվ վրան կննջեն արյանս ծարավող գայլեր:

Օդը գինի է դառնում դատարկ կյանքի ճիշտ կողքին,
 Շնչելու բան մնար, ես հիմա հարբել չեմ ուզում,
 Քամին ոսկորներիս հյուրն է, ինչպես դուռ թակող կին,
 Եվ հիշատակ է պատին լուսանկարը մրսող:
 Ուրիշ ի՞նչ ես ուզում, հենց դու, աղջի՛կ հեռավորի,
 Էլի երկիր ունեմ իմ աչքերի փոշու ներքո,
 Ես կհեռանամ, որ կասկածը քեզ բեռնավորի—
 Երևի կասկած է բերելու ամեն երեկո:
 Իմ աչքերում կանգնած փոշին ճանապարհ է գուժում,
 Թիկունքիս շունչն է դեռ ոտնակոխ ինձ հասնող նախնու,
 Երևի, սեր իմ, դու այսօր ինձ ոչինչ չես հուշում,
 Եվ լեռը մնացել է առանց հուշողի դափնու:
 Լեռից մի կյանք հեռու ծանոթանանք մի օր, աղջիկ,
 Մի բաժակի պատմությունը երկարում է ինչքան,
 Պատերի տակ ցնցվող ուսերը թվում են գաղտնիք,
 Երբ քեզ սիրելու եմ երեկ, այսօր և վաղն անգամ:
 Հետո... ծննդատան մոտով կանցնես ճիշին կպած...
 Ստվերս, ստվերս քո հեռավոր ննջարանում
 Չի դառնա երբեք կերպարանք՝ մարմնի վրա իջած,
 Եվ որպես պարտության գորգ կփովի ոտքի տակ-ն՝ ւմ:
 Թող մնամ թագավոր, հեռավոր երկրի շրջանակ,
 Մի հասկացող երկինք լիներ ու մի երազ փողոց,
 Աղջիկն այս դառնում է անկյունից շաքտած դանակ,
 Ու տներն ընկրկում են, որպես հարազատի կոծ:
 Մի բաժակի պատմությունը երկարում է ինչքան:
 Փողոցով մեկ կգնամ երկիր չունեցողի պես,
 Եվ ստվերս՝ գետնին փշրված ապակու նման,
 Կհավաքեմ ես կորածի աչքերով — հենց այնպես:
 Հենց այնպես իմ աչքերում կանգնած փոշին կհուշի
 Նորից ճանապարհ, որ գայթակղում է մի կյանք հեռու.
 Սովորական քամին կդիմի կանացի ուժի,
 Այսպես հեռանալու համար աննկատ սուլելու:
 Վերջ, աղջիկ, ծամերդ գնա՛ քանդելու քամու դեմ,
 Անձրև կլինի ու... օդում սայթաքող մի թռչուն,
 Թե շնչելու բան մնա — երազելու եմ արդեն
 Ունենալ հողին հանձնելու մի լեռան չափ աճյուն:

1980թ.

ԴԱՐԻ ՍԵՐ - ՏԱԳՆԱՊԻ ՆՇԱՆՈՎ

Նվիրվում է Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Սա արդեն կյանք է կորցնելու հրաշքով ապրողի.
Ո՞ւր գնաց աղջիկը առավոտից իրիկուն, միշտ,
Ես ունեմ երկրից - ոտքի տակ մարմինը փռողի,
Ունի երկիրը ինձ ջահել հասակում այսպես հեշտ:
Այսպես հեշտ հեռանալ չի լինի. աղջկան թող ասեմ,
Ես տեսել եմ կանչողին ամեն քարի դեմ կանգնած,
Եվ արյունս բարձրանում է, որ ափերով վազեն
Տեսնելու կանչողի քարը, որ թողեց ու գնաց:
Դու մարմին անվանվողին մոտեցիր վերջին անգամ —
Հողի սովոր քայլքդ թեթև լինի ջրի վրա.
Մանուկները զվարթ երգով ընդառաջ քեզ կգան,
Տես, մանուկներին երկինք կտանես որպես վկա:
Ո՞վ էր մոտենալու առավոտից իրիկուն, միշտ,
Այսպես դադարում են հիշել մեկի վերջին ճամփան,
Եվ հասկանում են, որ մխիթարողը չկար ճիշտ.
Ո՞վ է հասկանում, որ մխիթարող եղել էր ճամփան:
Հետո դար է թվում սեթևեթանքն անցնող աղջկա,
Ես տեսել եմ այլայլումը մեր փողոցի վերջում,
Ո՞ւմ գտնեմ խավարով, որին մանուկն ընդառաջ գա —
Քայլը թեթև անելու անեության կամուրջին:
Եկել է, մնա հրաշքը մի սիրո, մի երկրի,
Ինձ ունենալ ցանկանա մեր լեռներում կանչող,
Մեկը վերջին ճամփա ելնելիս ճակատիս գրի,
Որպես տազնապի նշան վերջին բուռը եղիր, հո՛ղ:
Իսկ աղջիկը գնաց առավոտից իրիկուն, միշտ
Նայում եմ արանքով մատների — թողած ապակուն.
Դռնից մտնող-ելնողը՝ ո՛չ բարև, ո՛չ հրաժեշտ.
Այս, այս ինչ ձեռքեր են շիրիմը բացում ու փակում:
Հիմա կորչում է ինչ-որ բան անտարբեր ձեռքերում,
Մա՞հ, թե՞ կյանք ենք կորցրել — փորձում եմ զգալ շոշափելով,
Վեր կենամ տեսնելու — գրերն ի՞նչ քարից են քերում,
Երբ արյունս բարձրացել է, որ վազեն ափերով:
Դուռը ելնող-մտնողի համար կդառնա խաչքար,
Եվ մարդկանց երկիրը կգնա մանկանն ընդառաջ —
Քայլը թեթև անելու այնտեղ, ուր ոչինչ չկար
Մեր հիշողությունը կորցնելուց վեր, գտնելուց առաջ:

Տես, աղջիկը գնաց առավոտից իրիկուն, միշտ,
Ես «Ժամանակից» չունեցա մեր միջև թողնելու.
«Ժամանակից» չունեմ, որ ունենամ թեթև մի վիշտ,—
Կասեմ ու կհեռանամ տեսած ճանապարհին հլու:
Այսպես չեն գնում, այսպես գալիս են ափին մոտիկ,
Որ պարզել է մեկը գիշերվա մեջ հող ու ջրով,
Ես իմ հող ու ջրով եմ մարդ, թողե՛ք մի քիչ մոտիկ,
Որ ամեն քարի դեմ հմայեմ նրա կանչերով:
Ա՛խ, ի՛նչ ծանոթ դեմք է իրեն կորցնում արդեն վաղուց,
Եվ վերջին բուռ հողը փոխանցվում է հույսեհույս,
Այսպես դժվար է մի բան ունենալ որպես նմուշ —
Քո երկրից ու սիրուց -ափով պարզած դեպի մի լույս:
Սա արդեն կյանք է, երբ մի հրաշքով կորցնում են հեշտ,
Այսօրվանից աղջկան տանից գնալու տեղ չկար,
Դուռը բացող-փակողը՝ ո՛չ բարև, ո՛չ հրաժեշտ,
Դուռը բացող-փակողի համար դառնում է խաչքար:

ՎԱԶՔ ԱՐՅԱՆ ՎՐԱՅՈՎ

Լուսանում է: Ես տխրեցի ամեն ինչի մասին,
Ամեն ինչից հեռու: Ա՛խ, ո՛վ էր երազել վազել
Իմ արյան վրայով լեռան համբարձվելու ծեսին,
Ո՛վ էր աղջկա կուսությունից սկսեց կակազել:
Ինձ նորից սպանում են անթարթ աչքի սուլոցով,
Ես դադարում եմ ապրել մորս գուրգուրանքի հետ,
Աշունը մոտեցավ, մոտեցավ, մոտեցավ կոծով,
Ու ճյուղերի դեղին սահեց վրաս վագոդի հետ.
Ճյո՛ղ, կարո՛տս քորիք, ինչպես վրադ սատկած թռչուն,
Երանություն է հիմա փողոցում մեռնել մենակ,
Լացս ցուցափեղկ է թրջված, որ կտանի գնչուն
Հեռու երկիր, հեռու տուն, այս հեռուններում —մենակ:
Ողբերգություն ունի լեռան ստվերի տակ մի մարդ.
Դե ինչ, հոգնած մատներս առ, որ աչքերդ սրբես,
Աչքի սուլոցով ինձ նորից սպանում են անթարթ,
Բայց ես չեմ մեռնի, մինչև որ արցունքդ դու պարպես:
Չեմ մեռնի, երկի՛ր, հին կանչերի բարձրության ահից,
Դեռ կսպասեմ, որ այս մեկը լեռան տակ մահանա,
Որ հուշը կարկատի իր մենակության զրահից,

Մինչև երկինք Որդին իր մեղքով վերադառնա:
Լուսանում է: Հովանավորի՛ր մեղքերս, աղջիկ,
Քեզ գոհաբերած մա՛շկս տուր՝ ծածկեմ հանգուցյալին,
Շունչ առ շունչ վերջանում եմ որպես երկնային բարիք,
Որ քո ձեռքերով հրաժեշտ երկարեմ անցյալին:
Ի՛նչ գեղեցիկ է անցնելու քանի տարի ու դար,
Բայց վախենում եմ ինձ հետ այսպես մենակ մնալուց,
Անթարթ աչքի սուլոցով դու իմ առեղծվածը տար
Հեռու երկիր, հեռու տուն, որպես մի անդամալույծ:
Իսկ հետո, աղջիկ, հետո դու այնպես կհեռանաս,
Որ մենակությունը հասարակ բան կթվա ինձ,
Ծովերից այն կողմ քեզ ձեռքով կկանչի մի երագ,
Եվ կերագես աստղի տակ գտնել թռչունի գիծ:
Ա՛խ, ո՛վ էր երագեց վագել իմ արյան վրայով,
Երբ ես լեռան տակ մոլորվեցի լույսից անջատվող.
Ո՛վ էր՝ գաղտնի մտավ դիմանկարիս սրահով,
Եվ մի աղջիկ քայլեց դեպի ճանապարհը հատվող:
Այսպես էլ ժամանակ չեղավ մոռանալու համար,
Մանկան փլատակից փոշի է քամին վեր հանում,
Դարձյալ մեկ բոպե լռության պահ եմ գտնում հարմար,
Եվ մորթվածի հայացքի նման ընդմիշտ վերանում:
Լուսանում է: Ուսերս անձրևանոցո՛վ ծածկիր,
Մա՛յր իմ, դուրս ելնեմ քայլելու հավերժ լացի տակով,
Աշունն հեռացավ, հեռացավ, հեռացավ դեպի ծիր,
Իսկ ես ապրում եմ որդիդ լինելու հիշատակով:
Ես գնալու եմ այն աղջկան մի քիչ սիրելու,
Աչքերիդ ջուրը հասցրու դատարկել իմ հետևից,
Բարձիդ տակ մի՛ նկար թող մնա — ցավը սրելու —
Ա՛խ, մա՛յր իմ, ո՛վ էր քրքիջով կախվեց մահվան թևից:
Չհասցրի հիշել, չհասցրի: Լացը կամաց
Հորիզոնը փակեց լքող աղջկա աչքերում,
Անջատող մայթին ի՛նչ երկար մնացի կարկամած,
Ի՛նչ երկար ոտնաձայներ են անջատումը գերում:
Այսպես էլ քեզ կկանչեմ երկիր բարձրության ահից.
Երբ լեռան տնքոցը նորից ծանր իջնի վրաս,
Ա՛խ, ո՛վ էր՝ երագեց մի օր հեռու մնալ մահից,
Ո՛վ էր՝ հեռունեքում դարձավ ձեռքով կանչող երագ:
Հովանավորի՛ր մեղքերս, աղջիկ, որ լուսանամ,
Օրը լուսանում է, որպես մենավոր պատուհան,
Գնչուն գնաց, գնաց լեռան ստվերում մահանա,
Իսկ ես արցունքս կխեղդեմ ճանապարհին իմ տան:

ԱՊՐԵԼՈՒ ՕՐ

Մի կատակի համար ես ուշանում եմ լուսանալուց,
Գուցե մեկը դառնա հոսող ջրերի սուրհանդակ,
Վախենամ ամաչեմ, ինչպես կինը կուսանալուց,
Գրպանահատ օրվա զարդարած դուռը լինի փակ:
Մինչև սկիզբ խմիր, որ գալո՛ւ չտեսնեն հանկարծ,
Թեք հայացքդ թվա Տիրամոր կաթից թրջված շուն,
Էլ կլինի՝ նայադ փրփուրին պառկող ամեն հարց,
Իմ արյան խնջույքում թողած փաղաքշանքի դաշույն:
Մոխրամանը կարծես լուսանկար չի լինելու,
Դու որտեղից եկար, մենության անծանոթ աղջիկ,
Էլ չափսոսաս ուղիս արտասուքով քո զինելու:
Մենակության աչքը փայլեցրու ափիդ առանց ճիգ:
Հիշատակի վթար ընդառաջող երկինքն անխույր,
Լողացած երազ է - ապրելու համար ներկելիս,
Ուզում եմ, որ այսօր ինձ հետ չլինես դու տխուր,
Լեռան պես համբարձվեն ժամերը մարմին փրկելիս:
Դատարկեմ գրպանս մուրացկանի հպարտ շրթին,
Թող անկման երաժիշտ բարձրանա աստղի դագաղից,
Ժամանակն է լինել ափսոսանք — դեմ առած ցրտին,
Ծիծաղի հարսնացու վերցնել պատահական խաղից:
Դեմս ես եմ կանգնած ինձ ողջունելու սարսափով —
Ճակատագրի ապտակ բաժանեմ մարդկանց անդունդում,
Հետո կնայեմ, որ գաղտնիքին մոտենան ծափով,
Կյանքս դեռ գուժելիս ձայները կարկամեն օդում:
Թիկունքիս մեծացող նորելուկի քարափն առան,
Վճարում եմ հուշի դիմաց հեգույթյան մի հաչոց,
Հայրենիք լինելիս պետք է գնալ կառափնարան,
Որ հույսի նեղ փոսում ընծայեն մեղքերի ջնջոց:
Միրտելության ժայռն է ոգեկոչում ինձ մոտիկին,
Հուշերի նրբանցքով շները հեռանում են ծեր,
Երերող զոջումի բոցում կսփռվեմ դեռ մեկին,
Լռության հայացքը եթե հիմա շատ թախանձեր:
Դավի ավազուտին սրթսրթացող երեսը ծուռ
Բարակում է անկախ գիշերվա ծաղիկն ինձ նետած,
Ես ելնեմ հավելու տանջանքի ծծերին մաքուր,
Քայլերս որոնեմ այս քաղաքում սեթևեթած:

Մշուշը փորում է աչքերը մահանալու դեմ —
Գոնե մի շիշ մնար փողոցի մերժած թնի տակ,
Պատեպատ հորանջող կասկածով ինձ էլ կխեղդեն —
Սարսուռը աղջկա կփնտրի հայելու վանդակ:
Կանչերը մարում են չոքած աղոթողի նման,
Զկա վերջ թափորին իմ մեջ կաղկանձող շների,
Հարության պսակին կճռճեմ ինձ որպես սահման,
Որ երկինքը ցածում տխրության պոռնիկին ների:

ՏՈՒՆ՝ ԿԱՆՉՈՂՆԵՐԻ ՀԱՍԱՐ

ՀԱՐՅ.— Ո՞րն է հայրենիքը:

ՊԱՍ.— Իմ և քո միջև եղած տարածությունը:

Ես բարձրացա ինձանից, որ լեռանը անուն տամ,
Ո՞րն ես դու - երազի մեջ ճանապարհ մոլորվածի,
Մայրս որդի է կորցնելու, երբ բացեմ դուռը տան,
Մեկը ձեռք կմեկնի մինչև կոկորդը խրվածի:
Ժամանակով լցվեց աղջիկն ինքն իրեն լքած,
Քամին տեսավ օրը ձեռքերիդ վրա մեռնելու,
Պատմություն հորինելիս քեզ հիշել էին հանկարծ
Ու բացած երակ պետք եղավ — ամեն ինչ ստելու:
Ահա իմ գալու ծուխն է լեռան վրա ընկել.
Ո՞վ է ծուխը տեսնելու, որ տուն ունենա մի տեղ,
Մեկն ուզեց բաց երկնքի տակ մահկանացուն կնքել,
Ու քամին գլխարկը տարավ, որ չասեն – հպա ըտ էր:
Լեռանն ի՞նչ անուն տամ, հենց որ բարձրանամ ինձանից,
Հիմա սրտերից պահե՞լ կլինի խոստումն աղջկա,
Երբ ժամանակն է, լցված սրտով վերցնի իր ձայնից
Մի քիչ սուտ - խառնելու քամուն այնտեղ, ուր խաղ չկա:
Ուր ճակատագիրը երեկվա աչքերն է պաղած,
Որ անհայտ կորածը աշխարհը կոչի հայրական տուն.
Պատահական հայտնվելդ ինչ խաչով է թաղված,
Որ աղջկան լացացնելիս գիտես - կլինի հետոն:
Հետո — օր կլինի հաստատ ամենա-ամենա,
Լռությունը կթվա, ու քայլերս՝ նրանից վեր,
Ո՞րն ես, ճանապարհ, ո՞ր մեկին ասեմ՝ ել ու գնա,
Եվ մի բախտ խոստանամ նրան, որ պիտի անիծվեր:
Երկար կնստի մայրս շեմին, քանի ես դեռ կամ,

Կորցնելու բան չի ունենա սև հագնելու համար,
Սպասումը կհաստատի, որ որդին է անզգամ,
Որ ճանապարհը ծեծող անձրևը շատ է համառ:
Հետո լուսանկար կանհայտանա օրվա ժամին,
Եվ երեսիդ կգոռան — ինչն է ծնկներդ ծալում,
Հիմա ո՞վ գիտի, ինչի մեջ գին կտան էժանին,
Որ մեկը հրաշք տղա լինի մոտիկ անցյալում:
Քամին տեսավ օրը ձեռքերիդ վրա մեռնելու,
Եվ երբ լքես նրան, քեզ ճանաչելու է կուզով.
Ամայի դաշտերում կանչն է ինձ տեղը դնելու -
Իզուր ես թաքնված, երբ քեզ գայթակղում են կույսով:
Մորեմերկ մնացի երագներ տեսնելուց առաջ,
Ուզեցի աչքերս սրբեմ, որպես օրվա հերոս,
Դեմքս ջրափոսին մաղթեց ճանաչողի հառաչ,
Ու քամին ասաց — աղջկա խոստումն առ ու բեր անխոս:
Առնեմ ու տանեմ ձայնը կրակի տրված մի տուն,
Որ զարմանքից քարացած հայացքներ պետք չգան.
Այս ամենին ի՞նչ անուն տամ, որ աչք էլ չի թարթում,
Երբ ինձանից բարձրացած ասեմ — անուններ չկան:
Ճանապարհը պատրանք է ստեղծում, որ լինի օր,
Իսկ արցունքն աչքերիդ խաղում է օրվա անվան հետ,
Մեկը ետ է շրջվում ահի օրենքներով բոլոր,
Խոստովանում, որ մի հոր տղա է կորած անհետ:
Որ անուն չունի հազար տարով հիշած ինքն իրեն,
Որ էլի սիրահարվելու է անբանի նման,
Թողնելու է շներին՝ իր ոտքերի տակ նիրհեն-
Երբ լուսին լինի, շները գոնե տեր կունենան:
Կվազեմ հետևից - գլուխը չկորցնի հանկարծ,
Ինչքան ճիշտ էր քամին, որ երբեք չէր եղել կյանքում,
Եվ անանուն լեռան դեմ սև-սև շորերը հագած,
Մայրս ծոցից լուսանկար հանեց, հանեց թաքուն:
Բայց էլ ո՞ւմ կմնա ճանապարհը տուն հասնելու,
Աղջիկն էլ հո սուտ չէր, որ ամեն ինչի վերջ կարծեն,
Հիմա տարածած ձեռքերս տանեմ հանձնելու
Երագողներին, որ անօգնականի պես կրծեն:
Մերն ունի երագի մեջ մնացածի բարի կամք,
Մերն առավոտ կանուխ է ճամփա ելնում քո տանից,
Կորած քայլերիդ փորձանքի մեջ մնա, բարեկամ,
Որ չամաչես դեմքիդ միշտ փոխվող կարկատանից:
Ես նայեցի կարոտով շուրջս, որ տունս փոխեմ,
Հետո հիշողությամբ գտնեմ ճամփան վերադարձի,

Մի մոր աղջիկ կգգա, որ չգիտեմ ինչի դող եմ,
Էլ չի պատասխանի իրեն տրվող ամեն հարցի:
Եվ լեռն աչքիս կբարձրանա, որ մի անուն չունի,
Եվ խաղ չկա, երբ սուտ խառնեց քամուն աղջիկն անտեր,
Հիմա քամու տարած ծխից լեռան կատարն ունի —
Ո՛վ է ծուխը տեսնելու, որ տուն ունենա այնտեղ:

ՀԱՅՐԵՆԻՔ ԱՅՍ ԱՂՋԿԱ ՀԱՄԱՐ

ՀԱՐՑ.— Ո՞րն է հայրենիքը...

ՊԱՏ.— Իմ և քո միջև եղած հեռավորությունը:

Իմ ժամը գալիս է որպես կորած երաժշտություն,
Գուցե մեկը հանկարծ կուզենա երկիրս հիշել,
Ձոռի նման գուգած այս աղջկան կբերեմ տուն,
Որ այսօր ապրելու համար չփորձեն ինձ գուժել:
Հառաչս ողորկ է ինձ մոտեցող ամոթիս պես,
Դեռ խարույկ են ելնում բնագոյները ոտաբորիկ.
Ո՛վ է այսքան երկար կառչել, որ արցունքդ պարպես,
Շիկացած ավազին թողած արյունոտ մի շապիկ:
Փողոցի անկյունում կհավաքեմ երեսս տող,
Կողքից կհռչոռն անշրթունք մեկի գթությամբ,
Ի՛նչ անդորր է հեռուն, երբ ինձ նայում ես դու խանդոտ -
Անդունդ թափահարող մանկան սարսափ մթությամբ:
Տխուր է ցերեկով լինել քեզ հետ օրվա հերոս,
Երբ որ քամին հղի կնոջ պես է գրկում շան դին,
Քաղաքը առանց ինձ կցատկի փրկության մի փոս,
Երեկվա անանուն ճերմակից կծնվի Որդին:
Արյան ծնոտը կախ՝ ես շոշափել եմ լույսի տակ,
Իմ մեջ գայլը ցնկնող ծնունդն է լիզում մորթվածի:
Թող, աղջիկ, մերձեցման կանչը արթնանա որպես թագ,
Արևկող լեռան մոտ արտասվեմ նինջը շորթվածի:
Վե՛ր կաց փաթաթվելու տիրոջ գունավոր համբույրով,—
Ես վերջին պարանի լարախաղացն եմ դառնալու,
Որ կույրը մոտենա մահագոյի տեղ չհասած լուրով,
Աչքերի շիրմին երազը տանի բառնալու:
Քո ըմբոստացումը թագուհու պարզևած փախուստ,
Քուրմը չունի երկիր դեմս իջնող հանկարծակի,
Ես արքա լինելիս կհամբուրեմ աջը վերուստ,
Որ մութ ռելսից գոնե թևը փրկեմ բացարձակի:

Վերջին բաժակի հետ եմ կամ արդեն անհայտ կորած,
Այս գինու մանուկը կարծես մայր է բերում աշխարհ,
Հայրենիքն ինձ կտա անկողինս մութում փորած,
Եթե պաղ շուրթերիս դու խշխշաս որպես նշխար:
Նվազն է բարձրանում երկյուղած իմ լեռան լանջի,—
Գոյության առաջին քարը նետողի կատակից,
Երբ ստինքը խանձվի լքող կրակից իմ չանչի,
Դու երկունք տեսածի կողեր չթախանձես յոզից:
Աչքիս թռչունները ամպել են գազաթը բոթի,
Օրվա երգչախմբում հարբում են Նախահոր ձայներ...
...Չգիտես աղջիկն այս ինչու խենթացած ելնում է ոտի,
Երբ երկիրը շոյում եմ, ինչպես կանացի ծամեր:
Անտառով հեռացած կախարդի աստղը թողնեն քեզ,
Ես գնամ սուլելու ինձ չնայողի հայացքում,
Հետո գուցե դու ականա հարցերից կփրկես,
Որ մերկությունդ չմնա իմ ու քո արանքում:

ԱՇԽԱՐՀԻԿ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

1.

Անկում է երկարել ճանապարհիս տիրոջ առաջ,
Վերջին ստրուկի պես ցավի առեջները լիզած,
Անվա արցունք է կոտրատել լեռը տխուրաչ,
Յուրտ օձիք համբուրող իմ բաժին հեքիաթը կիսած:
Լռության առաստաղ կմնա ինձ ու քեզ զոջող,
Չեն լինի էլ ձեռքեր, որ օրորեն կիրճում նրա.
Ես արթնանում եմ սուրբ լուսնոտի ավազին ուռչող,
Մեղք երկրպագելու հարկահան ազդրերի վրա:
Օրը խանձարուրն է նետել կույրին, իբրև գավաթ,
Իմ անունը չկա - սեր հուշելիս կանգնած արձան,
Նահանջի կենացին կաթկթա, որ լինի հավատ,
Փրկված կոճղի մոտ արտասուք երերա քառաձայն:
Սրբի ը մարմինս լերկ հոգեհացի փշրանքով կուշտ,
Վեղարի տակ եռա՝, ապաշնորհ իմ համբության,
Թոթափած աչքերս թող մնան ափիդ մեջ բուշտ-բուշտ,
Ես ջրափոս կգնամ ցնծալու իբրև ատյան:

Լույսն՝ իջած պարսպին, փաղաքշում է մտրակի պես —
Աղջնակի ծունկ է բաց կիսալուսինն այս մազապուրծ,
Հրահրի՛ր մաշկդ ցուքի հետ թուխ, մինչև պարպես,
Թող փղձկամ դեռ՝ ձյունոտ մատներին — սարսուռի խուրձ:
Կասկածի բլուրը կշիկանա երդմամբ նոսր,
Հառաչանքի թափոք կհեռանա շուրթերը գոց,
Ես այսպես կտխրեմ հատուցման քողի տակ բոսոր,
Հրմշտոցը մայթին կթվա խելագարի կոծ:
Արցունք է, հիրավի, ծրարում արքան դոնապահ,
Ուշաթափ երեսը կմեծանա առանց ներբան,
Թողած պարեգոտին — նեղ կհագա սերը մի պահ,
Որբություն քարշ տվող փողոցից չի մնա մի բան:
Աստղը կին է թափուր — ստինքները կորած հողում.
Մակույկը կողերի ձեռքերս տանում է օթյակ,
Փառաբանվի՛ր, ձիթենի՛, որ առանց ինձ չես սողում,
Ես կոխկոտել եմ արդեն լքման զրահները տաք:
Լապտերը ցատկել ծոցիդ, աչքերս է կռում հարբած,
Խարտիշագեղ իմ դողով բռնում կայմը հեթանոս,
Զրո ժամն է նեղսրտում սաղմոսի թիկունքից բաց,
Արյան ընկեցիկ պահին որոնում սրտիս մեջ փոս:
Ծալվող ծնկները քամին ներխուժել է ինձնից վար,
Բախտի ուսին ալևոր մանկանում է ցավը կույր,
Ծուխը թողել եմ հեռվում կախվածի կամքին ավար,
Որ դառնաս սերն ինչպես խանդաղատանք պահող գուռ:
Մերձեցման նվագը կլսեմ կաթի մեջ ցնցող,
Դու հենվիր անծանոթ անվանս հրվանդանին,
Մթնաշեղբ կճռճամ կացնի տակ դարձած հողմի ցող
Բոբիկ մոտենալիս հուշերի ծաղկող զնդանին:
Բարձրացի՛ր, սե՛րս, քուրան այս թալանելու լացով,
Ես մնալու եմ կարոտի շրջմուլիկ վերադարձ,
Հոգու որջ կարկատիր իմ օրվա թագակիր խայծով,
Բոթի պես թաքտա մերկության կտուրին հանկարծ:
Վերքն անձրևանոց է կախում հարևանի մեջքին,
Դեռ կանցնեմ հպատակ անապատով այս կանացի,
Պսակների խեցին է սփրթնել ձայնիս կողքին —
Ստվերները կտրած խորթ հիշողությամբ քարայծի:
Երկնքի շամփուրին համբույրները կմնան չոր,
Ես շրջվում եմ արդեն սեփական կենտրոն պրկելու,
Մոռացել եմ գուցե, որ երթս չունի գույն ինչ-որ,
Թոչնափետուր ներկած էլ կարմիր չկա փրկելու:
Դեմքիս մուրացկանն է ջղածգում մի հին նվագ,

Ողողել է կուրծքդ երամն ավելորդ իմ գինու,
Ափսոսանքը բուռ-բուռ դառնում է ցանկության առվակ,
Որպես սրբապատկեր մակընթացության նոր դափնու:
Ես այստեղ հրաժեշտ կծափահարեմ դռների մոտ,
Երաշտի վարագույր կփլվի ուսերիդ ամպին,
Գոնե ինձ հիշելու երկիրը կթվա ամոթ,
Եվ լուսինը կիջնի արշավող արևի թամբին:

2.

Որբանալու համար փողոցն ինձ ներում է դարձյալ
Նախնին արևելցու ցնցել է տիրոջ ուսը տապ,
Դեռ փախուստ է կրծում գորգի տակ հեքիաթի մի ծալ,
Մենության դաշտերից հալածում ամեն զապող կապ:
Կխառնեմ երեսս կարոտի թողած ապակուն,
Որ երկինք նայելիս հեծկլտա մեկը պատի տակ,
Ի՛նչ երկար վերհուշ է նեղացած այս էջը փակում,
Կոտրվածքը բոցի փնտրելուց կարծելով կատակ:
Սա էլ թախիծը չէ գթության կնճիռ ծախողի,
Վրաերթ է արդեն աղջիկը արյան փայլի մեջ,
Թուլացող կեսօրը կթողնեմ ինձ կույր խողխողի,
Սպասման հայելուն քսվելով հանկարծ դառնա վեճ:
Կայծակին է չոքել համրության զավակն անավարտ,
Զարդարելու գաղթը աղաղակող իմ էության,
Արշավից մարմինդ հառնում է առանց սաղավարտ,
Ես ինչպես փլուզվեմ, որ գիրկդ մնա ինձ պատյան:
Ողբից ընկնեմ, որ կռանաս կողերս հաշվելու,
Թափորում բացակա կանգառ շալակած դողի պես,
Արևը նկուղից կգա երկունքով խաշվելու,
Բայց ահի թակոցը ինձ հետ կմնա առերես:
Անծիր իմ լուռ տան դավը ճերմակածես քարով,
Ոսկորի Ծիր Կաթին շարտիր աչքիս զմուսած,
Ես լեռան զապանակ կպաշտեմ, որպես թաց գորով,
Ոտնահետքը կնքող երկյուղի թևերին մրսած:
Գրկի մեջ հրդեհ է մարում ցավի զբոսանքը կաղ,
Թող քեզ մոտ մեծանամ մեկ օրով այցելած պահին,
Իմ խաչից դեռ ոչ ոք չի արել հույսի սրբաքաղ,
Շարական փայփայիր դու հոգուս վայր իջնող գահին:
Երազի լուսանցքը մեծարելու ստով կգա,

Քայքայող մի հայացք պտույտից կանցնի համբառման,
Հաշտության ձյունները ճիչ կսպանեն, որպես ներկա,
Մառախուղ բռնելու կանչը կհասնի դամբարան:
Շնչելու ստորոտ պահպանիր ջրվեժի համար,
Ես հեռացա նորից խաղաղ պատկերիդ կածանով,
Այդ դու ես թափառում կապույտին նետած մի կամար,
Ծարավի ժապավեն փեշերին տանող իմ քնով:
Երակիս փշալար կսեթևեթի վարանոտ,
Փրկության անունից սպիները կլցնեն ինձ,
Կյանքը հորիզոնում կթվա աղոթած ծնոտ,
Իմ խոնավ քրքիջին լույս կթափվի ինչպես սոսի՜նձ:
Անցորդը թեքում է համբերության հացը դակած —
Կաթիլի հեղեղատ կբախվի քո վառվող կոնքին,
Մերկանում է դրսում հայհոյանքից ծնվող մի քած,
Բարևն ի՜նչ բաժանի քամու ամպրոպաճաք հոնքին:
Բոլոր ակոսները գոյության մնում են պարապ,
Դու շիկնիր այս անգամ Տիրամոր բացած ուռկանում,

Կեսօրվա հագուստով ապրելու գաղտնիք չտանես ափ —
(Ես շնչահեղձ ժամին կնայեմ ինչպես ես տանում):
Պահի մտերմությամբ սերը դառնում է սահման,
Մենացող ջրերին ծովահենն էլ պետք չէ այսօր,
Երեկ դեռ գուր ուներ երկինքը գետնին ինձ նման,
Այսպես ձյան եզերք էր ձայնիս հետ սահում դեպի ձոր:
Գնչուներն անցան տոները թողած սեղանիս,
Հիմա բաց են բոլոր մխակուլ չանչերը մեկի,
Ինչո՞ւ եմ այսքան շուտ լվանում ոտքերը մեղքիս,
Հավատի վայրէջքին խնկարկում ողջույնը նենգի:
Իմ մեջ ապրող գոհին ես շոյում եմ մինչև պռունկ,
Առանց երաժշտության դառնում մկրտման ավազան,
Ահա հափշտակած տանում եմ մի սառած կրունկ,
Որ շրջող անդունդում լինի միշտ հաշտության գազան:
Դու շղթա կափսոսաս բիբիս մրրիկով կարկամած,
Առասպել կվազի ծովի պես ճային ընդառաջ,
Նորելուկի վթար անձիս հետ կիջնի փայտամած,
Որպես նախամարդու ցուցափեղկ սողոսկող բիրտ աջ:
Սակայն քաղաքը կա նստած անկյունում իմ ներող,
Ո՞ր է ցանկապատը, որ պիտի ցածրանա պարտքից,
Վիրակապ է դաջում որսորդը տողիս համբերող,
Կեսօրվա նահանջած ձեռքին թողնում թռչունի գիծ:
Ինձ խեղդում է հեռվում սամարուհու քրտինքը շոգ,

Վաղվա սուտ նշանից կոկորդս սեղմում օրհնանքով,
Բարձունքին կվառվի մարմինը նրա անամոք,
Մերկությունը նորից խրախճանք կընկնի իր ճանկով:
Հուշարարի ձանձրույթ կճերմակի ծխախոտիս,
Քնքշությունից ծածուկ ես կխենթանամ պատերին,
Փամփուշտով կսրբի օտարուհին խուճապն այտիս,
Սովերները ծամած շուրթեր կներկեն թաթերին:
Գրպանում հիշատակ սփոփող հույսը՝ որպես ցուլ,
Հոգեվարք է թափում լիության եղջյուրից արդեն,
Ես լքում եմ բոլոր ճամփաները բառաչող ծույլ,
Որ հսկա երագով քարայրում աչքերս թարթեն:
Հարության փաթիլը հունցիր դու ձմռան կտավից,
Վերադարձիս համար երկիրը երես կթեքի,
Անմահության շքերթ բազուկս կպոկի դավից
Նախօրե բացելիս լուսագդից ծանոթ երբեքի:
Լույսից հողարկավոր իմ մեջ դեղնել է մի ամբոխ,
Անդորրի խոշտանգող վկան ցուցամատ է պարզում,
Ժամանակը օդով կտանի քայլերս ամպող,
Մինչ կաթը կսթափվի գինու հետապնդող պարսում:

ՀՈՐՍ

Որդիդ լինելու հիշատակով ես անցա վերջին ճանապարհով,
Տխուր նայեցին պատուհաններին, երբ քաղաքում լռություն էր,
Ինչ-ինչ ձայներ են հիմա արձագանքում լեռներում
(Չմեռնես, օ՛, չմեռնես — ես դիմեցի պատուհանից նայող Աննային),
հեշտ չէր, հայր, ես գնալու էի առջևից:
Էլ ո՞ւմ է պետք, եթե առջևից նրա իջնում է հիշողության տաք օրը,
մրսելու ոչինչ չունեմ, նույնիսկ քեզ, տխուր դեմքով
իմ կրծքին կոացող, նույնիսկ քեզ, որ մի օր
այցելել ես ինձ, որ չմոռանաս, թե ով առջևում
զգաց վտանգը (Չմեռնես, օ՛, չմեռնես — ես դիմեցի
պատուհանից նայող Աննային): Հա՛յր, հանգստյան օր էր.
թող մի գույգ ձեռքեր պետք գան
պատուհաններին տխուր նայողներին:
Ես սկսում եմ հավատալ այս ճակատագրին,
երբ օրը տաք է բոլոր մոլորյալների համար,
երբ ես ասում եմ՝ էլ ում է պետք:

ՇՈՒՇԱՆՆԵՐ ՔԵՁ ՀԱՄԱՐ

Երբ հոգնած կլինեմ պատահական ծանոթությունից
Եվ կուզենամ անցնել վերջին կարոտով,
Ես կգամ թեթև ու հմայիչ քո սերը դառնալու-
Շուշանները քեզ համար են, աղջիկ:
Ես երկար եմ կանգնել երկնքի դեմ,
Եվ պատուհանին ոչ ոք չի երևում,
Չի երևում բոլորի համար անուն կանչելու-
Շուշանները քեզ համար են, աղջիկ:
Դու գիտես, թե ինչպես թռչունը կանցնի դռներով՝
պատերին իր հավերժ սերը խոստովանելու:
Մեկը քնել է մոմերի լույսի տակ,
և զարդերը տանում է անծանոթը:
Ես չեմ կարող լինել:
Բարդին հնամյա աղոթք է,
իսկ ես բառերը չգիտեմ,
սա քո կյանքն է, աղջիկ,
որ դռներով անցնում է թռչունի պես,
հետո ես երգում եմ
գիշերով ճամփա ելնելիս,
հետո ես չեմ ուզում ոչինչ:
Ի՛նչ տխուր է ծովի վրա հեռալ քո սիրուց,
երբ աստղը իջնում է Բարդուն,
ինչպես հնօրյա մի աղոթք.
դու շրջվում ես ձուլվելու ձեռքերիս,
ձեռքերս - հնօրյա մի աղոթք,
գնանք այս օտար վայրերից,
քեզ այստեղ մոտենալ չի լինի,
այնքան մենակ է անծանոթը,
և գիտի.
ամեն ինչ կախարդանք է թվում Բարդու պես:
Ինձ մի՛ տուր այս լուռ պատուհանը -
մեկը դեռ քնած է մոմերի լույսի տակ:
Ա՛խ, շուշանները քեզ համար են, աղջիկ,
մի՛ թող, որ նորից հեկեկամ:
Դու անցիր տխուր ու չտեսնող,

այս օրը՝ հնօրյա մի աղոթք,
և ի՞նչ ես ուզում, ա՛խ, այսպես,
դու այսպես միայն հեռանում ես:
Եվ ի՞նչ եմ ուզում, որ լինես ինձ համար -
մեկը քնել է մոմերի լույսի տակ,
և զարդերը տարել է անծանոթը:
Ո՞վ է նկատում, ա՛խ, շուշանը կրծքիս
ու երկար չի ուզում հեռանալ,
ես գիտեմ՝ աստղը իջել է բարդուն,
որ դառնամ կախարդանքը նրա:
Մի քիչ էլ մնանք այս օտար վայրերում,
ուր զարդերն են,
ա՛խ, զարդերն են մնացել անծանոթից -
քեզ համար ճերմակ շուշաններ:

ԲԱՐԻ ՀԻՇՈՂԱՅ

Ես լուր ունեմ տալու ձեր թանկ հանգուցյալներից,
երբ անապատան մարդկանց լուսավոր պահերի
երկինքն եմ տեսնում մեր միջև:
Այս է ճանապարհը վերադարձի համար,
այս է վերադարձը ընդմիջտ:

Ահա մի տխուր օր դու մաքուր ես մնացել,
և սովորության ուժով մատներս
անդառնալիորեն քո աչքերն են փակում, անծանո՛թ:
Ես չեմ հեռանա ջահել կյանքիդ համար տանջվելու,
չեմ հեռանա:
Տարիների հեռվից արթնանում է քո հուշը առավոտի մեջ.
և գիտեմ, ոչ ոք չի մոռանա իմ հոգու ջերմությունը:
Անծանո՛թ, ինձ ոչ ոք չի սպասում միայնակությունից,
հիշի՛ր ինձ
և անվան փոխարեն իմ բարի կամքը տա՛ր երկինք,
որովհետև ինչքան դժվար է մերժված լինելը,
այնքան կարողանում ես համբերել տարիների հեռվում:
Իսկ դու...
Դու, որ հիշել ես քեզ տրված բախտը, էլ մի՛ սպասիր:
Արևածագին ճերմակ երամակներ են անցնելու երկնքով,
Ես կպահպանեմ թեթևությունդ, հենց որ հեռանաս,

Ես կպահպանեմ առջևում:
Դեպքից դեպք մոտենալու է և իմ լռությունը,
և բոլոր տղամարդիկ կխոսեն անծանոթ երկրի առասպելից,
կխոսեն շշուկով,
և կանայք չեն իմանա իմ գաղտնի սերը,
որովհետև ես եղա մարդկանցից երջանիկների մեջ:
Անծանոթ, հիշողությունը ծանր է լինելու,
Ես չունեմ մեկը, որ լուր տանի իմ հավատի մասին:
Սակայն ես ոչինչ չունեմ կորցնելու
իմ որդու աշխարհից.
կվերցնեմ թափուր դաշտերի սևը
և սևի մեջ կանգնած կխոսեմ փառքի դափնիներից:
Արևածագին զինվորներ են անցնելու,
Ես սրտիս կսեղմեմ նրանց համազարկի ազատությունը,
ահա ասում եմ.
Ես չկարողացա լինել նրանց հետ:
Արևածագին գեղեցկուհիներ են անցնելու.
Ինչ դժվար է սիրել կյանքը գեղեցկացնելու համար:
Անծանոթ, արևածագին ես կմեռնեմ:

ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ես անեծքով փակված շիրիմների համար
և տառապանքի համար
ու երկար դարերի փորձով
գալիս եմ աշխարհ:
Ողբացե՛ք ինձ, սարե՛ք,
ձեր դեմ ավերածության երաշտը զավակներիս,
նրանք ինձ տեսնում են
անեծքից ծանրացած հողի ուժով,
նրանք ինձ սիրում են
արևածագի բացվող քարերի մեջ,
որովհետև ես միակը եղա,
որ երբեք չերդվեցի շիրիմների անունով,
երբեք չասացի այն,
ինչ լեզվիս վրա թույն էր ու թշնամանք:
Հեռու երկրի արևածագը հիմա ողջունում եմ

եղբայրներիս համար:
Մի ուժ էր պետք -
մի վերջին անգամ փակվելու քարերի մեջ,
մի ուժ էր պետք -
մի վերջին անգամ լինելու կասկածը գուշակների:
Ես նրանց ձայնը անհիշաչար ու տխուր
պահպանում եմ թանկ շիրմի պես:
Ողբացե՛ք ինձ, ձիւ՛ր,
Ձեր անտերության համար,
որովհետև հողի ծանրությունը ձերն էր ավելի,
որ ես ունեի,
ձերն էր մայրամուտը,
երբ ձեռքերս տարածեցի քույրերիս.
և երկար օրերի անքնությունից
ծաղիկը թառամեց սրտիս մեջ:
Ժամանակի շունչն էր դիպել դրոշներով ու զենքերով,
ձիւրին մի՛ թողեք վարգելու անտեր -
ինձ որտեղից տապալվածի թողած արև:
Ուլքեր դեռ գիտեն քո գաղտնիքը
և թողնում են տաք բաբախումը սրտի,
արդեն մոտեցել են,
արդեն չեն հեռանում
այս ցավից, այս ցավից, այս ցավից:
Արդեն չեն կարող ձիւրից բաժանվել
հանուն մեծ սիրո ու բախտի,
մոռացում լինի,
մոռացում լինի մայրերին այս դժբախտ:
Ողբացե՛ք ինձ,
ողբացե՛ք ինձ, մայրե՛ր,
ես եղա միևնուճար:
Քար հավաքեցի սիրելուց այսքան շատ,
իսկ խավարը տարավ նահապետ լինելու
ձեր որդոց անասող երկնքին:
Այսքան շատ համազա՛րկ հանուն ընկածների...
Այսքան շատ չեմ կարող ձեր կյանքի գնով
տեսնել դարերի քարկոծումը՝ ինձ:
Ողբացե՛ք ինձ, սիրահարներ ըր,
առասպելով հյուսված իմ կյանքի օրերից
ամենալավը երբեք չի եղել:
Մեկն ընկել է ջրերի հետ ու բախտի
և աշխարհին պարգևում է հերոսներ:

Մի՛ թողեք, որ նրանք բաժանվեն
հանուն դափնիների.
ձեր սրտերը դեռ երկար կմնան
լափող ալիքների վշտոտ ափեր:
Ո՛վ պիտի կրակը պահպանի վերևում
առասպելական լողորդի համար,
երբ արդեն ուշ է.
Իմ սիրտը վաղուց ուրիշն է տիրում
տեսքով ջրերի:
Ես հավատում եմ իմ ուշացած խոստովանությանը
ու չեմ կարող օրհնել
ձեր սերը միակ:
Ողբացե՛ք ինձ լուսնի անտարբեր լույսով,
որ գիշերները ձեզ համար դառնան
գաղտնի հանդիպում,
ու լինի արցունք,
ու լինի ծիծաղ
անեծքից փակված այս քարերի մեջ:
Իմ միշտ երագող աչքերի համար
ողբացե՛ք ինձ, ճամփորդնե՛ր,
եթե ձեր ծարավ շուրթերի համար
աղբյուր է բացվում ձիու հարվածից:
Ես երագել եմ ձեզանից երկար գնալ այս ճամփան-
դրա համար ինձ երբեք մահ չկա:
Մի պահ նստեցե՛ք ջրերի կողքին,
որտեղ մի տխուր երգ են խմբերգում
այրերը հոգնած,
ու պերճ կանայք արտասվում են
անառիթ ու լուռ:
Ափսոս, ճանապարհը ես չանցա
մի կտոր հացով
ու ջրով մի կում
և եղա այն վայրում լացակումած՝
հանուն գեղեցկության:
Ողբացե՛ք ինձ,
ողբացե՛ք...
Ո՛վ պիտի ողբա անմահությունս,
ո՞ւմ անեծքն է, որ պիտի ավերի
այս քարերը փակ,
ու եթե հողը չի կարող տանել ապրելու համար,
թող որ տեր լինի

թաղելու համար:
Եվ վերջին ողբով
ողբամ իմ կյանքը,
որ անհիծված է հայրական կամքով -
այս ցավից,
այս ցավից,
այս ցավից:

ԳՆՀՈՒԱԿԱՆ ԵՐԳ

Երբ գալիս եմ ինձ խաբելու,
վրանները հավաքում են առավոտ շուտ,
և ձայների պտույտը միապաղաղ
քո թևերով բարձրանում է գուշակության:
Մի՛ ասա, Սաթենի՛ կ, դու հիշի՛ր, Սաթենի՛ կ,
իմ բախտի վրա հեծկլտացող կիթառներին,
երբ մեռած կակաչների քամին
իմ տաք ափերի հուշն էր տանում
հեռավոր ու անձանոթ մի աղջկա:
Մի աղջիկ երագում է գեղեցիկ գլխաշոր
և պտտվում է,
և պտտվում է
վրանների շուրջ մի անհույս մարդասպան,
ուրիշ ելք, Սաթենի՛ կ, ուրիշ տխրություն, Սաթենի՛ կ,
Ի՞նչ է անելու սերը անպաշտպան,
Ճիչը, որ չի դառնում մատանի
և գայթակղում է սանձարձակ մի շուրջպար:
Այդ ես եմ միայնակ հենվել սառն օդին
և տանում է, տանում իր վրանը գնչուն:
Ի՞նչ երգ է հորինել, աստված իմ, ի՞նչ երգ է...
Իմ կյանքի օրերն են համրանում ամայի դաշտերում:
Մեռած կակաչների նշանի մատանին
թաքուն պահում է մի աղջիկ:
Մի աղջիկ ծփում է գեղեցիկ գլխաշորով,
իսկ վրանների շուրջ՝
պատահական շրջմովիկի թողած հետքեր:
Իմ սիրտը խփում է խոտերին
և գոռում եմ՝
հնչեցե՛ք, կիթառնե՛ր,

ես նրան տանում եմ միայնակ՝
թիկունքիս հարվածից չոքելով:
Ու նորից խաբում է իմ ափի նշանը,
շուրջպարը դառնում է կանացի ծեփծեփում,
Կարապետ ր, ձեր անմեղությունը պաշտում եմ ավելի
և չեմ հավատում, որ մահը լինում է գեղեցիկ:
Կարապետ ր, անցնում եք լճերով,
երբ ես սիրում եմ ստվերները ձեր թների-
ձեր թների ալը տանում եք ինձանից,
որ լինի երգը,
որ լինի երգը ամենուր:
Ու տանում է, տանում իր վրանը գնչուն,
սիրում եմ, Սաթենի՛կ, արդեն վերջ, Սաթենի՛կ,
մի աղջիկ ծփում է գեղեցիկ գլխաշորով,
և հեռանում է անտունը քանդվող վրաններից,
որ գիտեր—
եկել էր խաբվելու:
Իմ սիրտը խփում է խոտերին,
և շները չեն հեռանում հանգչող խարույկներից-
մնում են վերքը լիզելու:
Առավոտ շուտ ամայի դաշտերում
կիթառները լռում են ընդմիջտ,—
երգի հետ,
երգի հետ ամենուր:

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՆ

Ո՞ր է տանում ինձ քո կարոտը,
անձրևները սիրում են լինել ամեն տեղ,
իսկ քո արցունքնե՞րը:
Այսօր նորից հիշել եմ վերադարձողների,
և ամայությունը իջնում է հերկերին:
Ո՞վ պիտի բաժանի քո սուրբ նշխարը զարմացածներին,
Իսկ դու գեղեցիկ ես քամու հետ,
գիտես ապրել,
երբ ես հեռու եմ:
Իմ կյանքը պետք էր ամայացած հերկերին:
Ոչ որ չհասկացավ գաղտնիքը մեր միջև:

Շատերը թվացին հարազատ, շատերը ինձ մոռացան,
և ես կիսելու ոչինչ չունեմ հանուն եղբայրության:
Ձա՛յն տուր, կորած իմ աղջկան,
Ես հիմա էլ եմ սիրում,
երբ թաց աչքերով
շուռ եմ գալիս քամու հետ պարողների դեմ:
Իմ լա՛վ ընկերներ, ես գիտեմ՝ ինչ պատահեց մեզ,
որ չհավատացինք մեր թներին ուժ տվող զավակների:
Այսպես թախծում ենք անպատեհ, պատահական
ուրախ աղջիկների համար շարունակում հարբել:
Իսկ այսօր ո՞վ է ամենագեղեցիկը:
Մենք գիտենք պահպանել հայրենին,
երբ մեր աչքերը վերադառնում են
հոգնածների, սպասողների, ուշացածների համար մնալու:
Ձեր ուրախությունը փոքր էր,
Եվ աղջկա գրկում ամեն ինչ մոռանալը՝ սովորական,
Չէ՛, մենք գիտենք պահպանել հայրենին:
Այն մեծ լռությունը ձեր հոգիների երաժշտությունն է
անտերունջ հերկերի համար,
Մի օր դուք եկել էք և ինձ սեղմել ձեր կրծքին -
Ես ցավով տեսա ձեր անպաշտպանությունը և...
սիրեցի:
Մեր ներսի խուլ հարվածներից մարդիկ կարողացան հեռու մնալ,
և արյունը որբացավ կորած հերկերի պես:
Ի՞նչ դատ է ձեզ հարկավոր, մարդի՛կ,
որ չի եղել հոգիների երաժշտություն լսողների համար,
երբ կամաց-կամաց մահը առանք ուսերիս -
մենք արդեն գիտենք ճանապարհել:
Եվ էլի հողմերի պես պտտվեց պարը,
մեր ամուր թներին -
անօգնական աղջիկների գութն ու գորովը:
Ի՞նչ դատ է պետք, մարդի՛կ,
որ մի օր արդարանանք
մեր հաղթական քայլերի մեկուսացմամբ:
Ես գնում եմ այն հավատով,
որ եղա երգիչը ամայացած հերկերի
և լեզուն չմոռացա:
Այնտեղ- օտարության մեջ,
կարոտեցի բարեկամներիս
և հիշեցի, հիշեցի, հիշեցի նրանց,
ովքեր իրենց կյանքն անցկացրին օտար ավերում՝

կայարաններում, փողոցներում, հյուրանոցներում
և... երազի՝ մեջ:

Երազի մեջ զավակ են հղանում-

լեզուն չմոռանալու համար:

Այս փոքր ուրախությամբ

մենք գիտենք պահպանել հայրենին:



ԲԱԺԱՆՈՒՄԻ ՔԱՂԱՔ

ԲԱԺԱՆՈՒՄԻ ՔԱՂԱՔ

Ինձ չեն հավատա, երբ տունս թողնեմ երագող վերջին գույգին,
Եվ աչքս աչքիդ - ստիպեմ մեզ գտնել հազար տարի հետո,
Եվ հավատամ ու չհավատամ մարդկանց կյանքը սիրող սուգին,
Ձեռքս ձեռքիդ — ես գոյության ձևերից չբաժանվեմ հերթով:
Մի կին հեռանում է մեր փողոցի աղբակույտերի միջով,
Անկյունում տղաներ են հայհոյում — միգուցե սիրահարվե՞ն,
Ինձ չեն հավատա, որ ես նրանց նմանվում եմ ամեն ինչով,
Որ հաճախորդ չունեցող պառավից գարեջուր պիտի առնեմ:
Այսօր մեկին թաղելու են. պառավ իմ, քեզ համար չեմ ասում,
Գուցե աչքեր է ունեցել բացվող դուռը չնկատելու,
Հիշել է, ա՛խ, հիշել է նշանի մատանին ողորմաթասում,
Գիտես, իմ սրտից ծափերի արժանի արյուն է կաթելու:
Հիմա նա մերկ է, որովհետև ես ծածկելու ոչինչ չունեմ,
Հիմա փուչ գրպաններս թափ կտամ, որ պառավը նեղանա.
Արևելքից արևմուտք - ազատ- հյուսիսից հարավ - թռչուն եմ:
Շոգ է Փոշի է: Մահ է: Թող մեկը ինձ նայի ու հիանա:
Եվ եկեղեցին արբանյակ կթվա ուրիշ մոլորակի,
Բայց կապ չի ունենա քաղաքից հեռանալու ցանկության հետ:
Ես տխուր եմ, որ քեզ չեն ճանաչելու շները մեր բակի,
Ես տխուր եմ, որ ծիծաղելու աստիճանի էլ չեմ գա ետ:
Ես քեզ ասում եմ՝ ահա իմ քաղաքը, Ձոյա՛, բարի՛ աղջիկ,
Ծառի նման աղջիկ, ահա քեզ պոկվող թռչունների երամ,
Եկեղեցու զանգերն արդեն քեզնից չեն պահանջի ոչ մի ճիգ.
Առաջինը դու հեռացիր, ահա հայացքս — որպես դրամ:
Մանկությունն իմ չի եղել պատերազմական տարիների հուշ,
Այն ժամանակ մայրը զավակ չէր ծնում մահվան ուղարկելու,
Հիշել եմ, ա՛խ, հիշել եմ — լեռան ստվերում լինելու մի ուժ,
Հայրական տան մեջ ինչպես եմ արյունս գույնով ծուղակելու:
Եվ ջրեր են հոսել: Հարբել եմ ես եկեղեցու զանգերից,
Այս քաղաքում միայն բարի մարդիկ կապրեն —գարեջուր ծախող,
Մի նահապետական աղջիկ կտանեմ՝ մաքրելու ժանգերից,
Քեզ կտանեմ ինձ հետ, Ձոյա՛, որպես իմ կյանքի հաշիշը ծախող:
Ուզո՞ւմ ես, քեզ պոռնիկ անվանեմ պատուհանը փակողի մոտ,
Հետո ի՞նչ անեմ, երբ ծանոթ երաժշտության տակ մարմին ճոճվի,
Ուրիշի մեղքը քեզ հետ կապելով՝ հեշտ է դառնալ անամոթ,
Ինձ ասա՛, բաժանումից առաջ իմ աչքը պե՞տք է որ թրջվի:
Պե՞տք է, որ այսօր լուսանկարվենք ապագա զավակներիդ համար.
Չե՞ որ այս քաղաքում զավակ ծնելը մնում է սուրբ մասունք դեռ,

Գերեզմանոց քայլեմ ընկերոջ շիրմին անուշ լալու համար,
 Որ քեզ համար թվամ բոլորի կողմից մերժված ու անտեր:
 Ահա ինչքա՛ն վտանգավոր է ինձ մենակ թողնելն աշխարհում,
 Ինձ չեն հավատա, որ կայարանում դիմավորելու եմ քեզ,
 Եվ աղմուկի մեջ տեսնում եմ, ինչպես տաք ժպիտներն են շարվում—
 Ասես թե ռելսերի երկայնքով, որ ճանապարհը դառնա կես:
 ...Ուրեմն գնո՞ւմ եմ: Թող մեկը ինձ նայի — կյանք է ու մահ է,
 Ի՞նչ անուն տամ անկյունում հայհոյող տղաներին ես մի օր,
 Ինձ չեն հավատա, որ նրանց նմանվելիս սրտիս մեջ ահ է,
 Երբ եկեղեցին ուրիշ մոլորակ է բարձրանալու մի օր:
 Ես քեզ ասում եմ՝ ահա իմ քաղաքը, Զոյա՛, Բարի՛ աղջիկ,
 Ծառի նման աղջիկ, ահա քեզ պոկվող թռչունների երամ,
 Եկեղեցու զանգերն արդեն քեզնից չեն պահանջի ոչ մի ճիգ,
 Առաջինը դու հեռացիր, ահա հայացքս — որպես դրամ:

ԺԱՄ

Երկրի ու երկնքի միջև ես լինելու եմ մի բարի խոսքով,
 Կունենամ ամեն ինչ - ճամփից սկսած ու... մի կյանք-վերջ տված.
 Այսօր բախտ են բերում, որ ձեռքերս զգան, ինչն են փոխում ոսկով,
 Այսօր իմ կողերից կպակասեն, ինչպես օդը: Գուցե թվա՞ց:
 Երկրի ու երկնքի միջև մարդկային արարումն իր ժամն ունի,
 Երբ երևում է տեսքը մուրացիկի, պոռնիկի, հարբեցողի,
 Եվ գիշերային հավաքարարը ձեռքին ծաղիկները ունի—
 Վերջին լացից, հոգսից, սովորական բանից կանգնած մնացողի:
 Գուցե թվաց, հարազատ հորդ ճանաչել ես պատերի տակ,
 Երբ քեզ ոչ ոք չի կորցրել, որ գտնի և գլխով անի՝ «լավ եղիր»:
 Այս քաղաքում այնքան բան կա համատարած սպիտակ—
 Հարսնացուներ, վիրաբույժներ, մեքենաներ... մերձավորիդ սիրի՛ր:
 Սիրիր մերձավորիդ, որովհետև սա կմնա էլի քաղաք,
 Այս ամենից հոգնած գյուղական աղջիկներ գայթակղողի համար,
 Սեր մանկության խաղերի համար, որ մայրերից առանք ու փախանք
 Մեծանալու օրով, ամսով, տարով, և մի ուժ եղավ միշտ համառ:
 Երկրի ու երկնքի միջև մարդկային սերն օդի պակաս ունի,
 Եվ մանկատունը դուռ ունի, մորս նայած այս աչքերով տեսա,
 Իսկ կռունկները գնում ու գալիս են առանց երկրի անունի,
 Իսկ մանուկներին անուն պետք չէ, որ երկնքում լինեն հավասար:
 Եվ մի ուժ ինձ տարավ մոլորված մարդկանց մոտ, որ խոնարհ էին հացով,

Իմ սերը գեղեցիկ էր, չտեսավ, ինչպես են ձեռքերս օդն զգում,
Մարդի՛կ, տխու՛ր մարդիկ, մի գիշեր անցնելու եք առաջին լացով,—
Երկրի ու երկնքի միջև լինելու ինձ շարունակողի բազկում:
Եվ մարդկային տառապանքը կմեծանա օրով, ամսով, տարով,
Որպես մեծ քաղաքում չգրանցված անտունների համար ժամկետ,
Ապրողին ի՛նչ եղավ, երբ մեկը գայթակղվեց կյանքի դադարով,
Երբ քաղաքը հեռվից նայելիս թվացել է ափից ելած գետ:
Եվ հոսել են ժամերը մուրացիկի, պոռնիկի, հարբեցողի,
Իմ մարմինը գեղեցիկ էր, և հողն զգաց, և բոլորը եկան:
Գուցե թվաց, պատուհան է պետք, որ տեսնեմ միայնակ լացողի,
Որ տեսնի, իմ մարմինը գեղեցիկ է, երբ շարունակողներ չկան:

Երկրի ու երկնքի միջև շարունակվում է անտարբեր մի ժամ,
Կանգնած մնացողին՝ մի բարի խոսք, մի բարի խոսք, մի բարի խոսք...
Գուցե թվաց, հայրս պատերի տակ ծաղիկ է վաճառում էժան,
Եվ միակ մարդը ես էի, որ մոտեցա ու կանգնեցի անխոս:

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ

Ո՛վ էր, որ գիտեր խնայել մեղավորի պես մոտեցողին,
Երբ երևացիր ինձ, փոքրի՛կ աղջիկ, պատուհանին մենավոր,
Դրսում շտապող մարդիկ մոռանում են մահը, ողբը, օդին,
Դրսում ձևեր են իրար գտնում — անտուն, անսեր, մեղավոր,
Այսպես բոլորին կմոռանամ, տոները կմնան տեսքի,
Վաղուց ինձ մոտ եղածի հիշողությունով բոլորն են ապրում,
Այս ո՛վ է մատնում հարազատներիս անվերջ ու վերջին հոսքի,
Դեռ տխուր աչքերով տղա է, որ հին ճանապարհն է բռնում:
Որ երևալուց հետո ուսերը թողնում է անդունդի տակ,
Մինչև ե՞րբ ես տանեմ, փոքրի՛կ աղջիկ, իմ ժամը -քո սպասած,
Համոզի՛ր թևերի թափահարումին լինել կոպերի տակ —
Խելագարվածի համար ինձ հարցնում են - վերջին խոսքն ի՞նչ ասաց:
Ի՞նչ ասաց նա, երբ օրհնեց իմ սեղանը օտար մարդկանց մոտ-
Այդ ժամանակ անտուն է դարձել իմ ամենասիրած քամին,
Չեմ մխիթարի նրան, որ գնացել եմ արյանն այսքան մոտ,
Եվ վերադարձել դեմ դիմաց ասելու, թե ինչ տարա ահին:
Բայց երբ ավարտեմ հորիզոնը հեռացած վերջին թռչունի,
Մի՛ թող մոռանալ, որ օտար վայրերում մեռնում են միայնակ,

Դեռ փոխվում ենք հաղթանակներից, որ մեզանից մեկը չունի
Եվ վաղվա դժբախտությանը այսօր սիրով պիտի միանանք:
Բաժանելու եմ, որ գամ քեզ երևացնելու պատուհանին,
Մի գույգ աչքեր արդյոք ի՞նչ խավարից են նայել անհամբեր,
Դու հասկանո՞ւմ ես, որ հանկարծ բոլորը մոտենան ու հանեն
Քեզ պատուհանից... Ուրի՛շ երգ եմ ուզում, որ երգում են խմբով:
Ո՛վ էր, որ գիտեր խնայել մեղավորի պես մոտեցողին,
Երբ երևացիր ինձ, փոքրի՛կ աղջիկ, պատուհանին մենավոր,
Դրսում շտապող մարդիկ մոռանում են մահը, ողբը, օղին,
Դրսում ձևեր են իրար գտնում — անտուն, անսեր, մեղավոր:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

Ես փողոց կգամ քեզանից շուտ,
Ի՞նչ ես կարկամել, վա՛յր իջիր, տե՛ր,
Մերս դայակ է, հագին լաթեր,
Բայց փողոց կգամ քեզանից շուտ:

Ոչ ոք չի տեսել արարքդ մութ —
Դու տիրամոր հետ քնո՞ւմ ես դեռ,
Ես փողոց կգամ քեզանից շուտ,
Ի՞նչ ես կարկամել, վա՛յր իջիր, տե՛ր:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱԽԻԾ

Ձեռք չդիպած մարմինդ թող աչքերիս ներսում
Ու կռպերի՛ս ապավինիր մերկությունը քո:
Եվ մի՛ հարցրու, թե ինչու քեզ այսպես եմ կորզում՝
Ձորի թաղի շուռ եկող պատերի տակ դժգոհ:
Քաղաքում ջրհեղեղ է հիմա ապօրինի,
Իսկ այրվող ճակատիս մոմը Յոթվերքն է դարձել,
Գնամ լիզելու դունչը վերին անօրենի,
Քանի դեռ ինձ մի կյանք հավատարիմ է կարծել:
Գուցե ճանապարհս փոխեմ այս կնոջ համար,

Ի՞նչ իմանամ, սեր իմ, քեզ ո՞վ է տանելու հարս,
Ափսոս, լռելը վաղվա փորձությանն է հարմար,
Երբ ջրհեղեղից հետո աչքերս թվան պարզ:
Իսկ այրվող ճակատիս մոմը Յոթվերքն է դարձել
Եվ արյան գնով իմ վերջին կապերն է խզում,
Եվ իր նեղության ամպերը շուրթերս է կարծել —
Արևելքից արևմուտք գոռգոռալ է ուզում:
Բայց այս ջրհեղեղը համը հանում է հաստատ —
Փողոցի անկյունում ի՞նչ գործ ունեմ ես ինձ հետ,
Դրամատիկ գինի է լցնում ամեն հեքիաթ,
Որ խղճի խայթից զոջում ես ու... ինձ կանչեմ ետ:
Ափսոս, լռելը վաղվա փորձությանն է հարմար,
Այս տարվա կանայք ի՞նչ փեշեր են դարձել — է՛հ եհ,
Իմ աստղի տակ էլի ինչ-որ բան կօրոքվի հար,
Երբ ոտքերս կտնկեմ հարբած - Յոթվերքի մեջ:
Այսպես շատ կթռչկոտես, անմահության ն տղա,
Եվ գուցե ճանապարհդ փոխես այս կնոջ համար:
Քաղաքն օրը ցերեկով հոգուդ հետ կխաղա,
Որ սուլոցդ Ձորի թաղին դառնա յոթ կամար:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՈՆ

Տները մոտենում են որպես գիշերային պատահար,
Իսկ ի՞նչ է նշանակում դիմացի սգատունը ճերմակ:
Երևի խաղաղություն կլինի կյանքս — վաղվա համար,
Որ ընդառաջ է գնում ընտրյալ զոհի նման միայնակ:
Համբերանքս մանկատուն կտանեմ, որպես մեկ այլ շնորհ,
Եվ անցորդ կշփոթվի արտասովոր իմ բեռի հանդեպ,
Եվ թիկունքիս մնացած հայացքը տխուր ձև է մի նոր,
Որովհետև լինում է կյանքում տխրության եզակի դեպք:
Իսկ տները - մի գիշերային պատահար մերձեցնում են նուրբ,
Եվ համառ շեղբ է բոցկլտացնում հավատը իր կարծրությամբ,
Պատահել է, երբ ես դարձել եմ ինձ վրա կռացած սուրբ —
Հիշելուց հետո ելել փլվող պատերի ուղեկցությամբ:
Երևի խաղաղություն կլինի կյանքս վաղվա համար,
Եվ առաջին պատահած լեզուն կկտրեն մութը չընկած.
Միայն մի հարցով եմ ուզում պարզել վիճակն այս անհարմար—
Ի՞նչ է նշանակում դիմացի սգատունը ճերմակած:

Այս ցավն ապրողի համար վառվող այտերիս գլորեմ քիչ-քիչ,
Որ անցորդ չփոթվի արտասովոր իմ բեռի հանդեպ.
Դե՛, ճանապարհիւր, հա՛յր, որ ինձ երկնքում չասեն հանկարծ բիճ,
Քանի դեռ կյանքում լինում է տխրության եզակի դեպք:

ԹԵ ԻՆՉ ԵՂԱՎ ՀԵՏՈ, ԵՐԲ ՊԱՐԶԱՊԵՍ ՈՉԻՆՉ ՉԷՐ ՊԱՏԱՀԵԼ

Երբ միայնակ քայլերիդ ռումբերն աշխարհն ավերեն,
Դու փոշոտ, լքված, թափառական — թաղդ կհասնես.
Կզգաս, որ արցունքներ զսպելը ուժերից վեր է,
Ու դրսերում մնացածի ընդամենը հագն ես:
Այս ցավին բարոյակա՞ն ասեմ, որ ձեռք չի դիպչել,
Իսկ լեռանն ի՞նչ ասեմ, որ աչքը մնաց մեկուսի.
Նայիր — սայթաքելը սիրուհու պես կաշիդ կպճել,
Նայիր — ափերիդ մեջ խոթում է արյունն Հիսուսի:
Բաժակ բարձրացնեմ առ այն, որ հետս չեմ տանելու
Սիրային կապերն անփորձանք ու... քաշվեմ ես մի կողմ,
Ո՛վ անկյուն կփնտրի հարսնացուին — ետ անելու.
Ո՛վ կմնա ձեռքի տակ ճակատագրի անողորմ:
Հետո, ողորմի անցավորաց, որ չեն կշտամբում,
Քանի դեռ զրկված եմ երազ տեսնելու շնորհից.
Հայրի՛կ, տո՛ւն թող ինձ, հավատա՛, ես էլ եմ շտապում
Անուն հանած ունենալ հարբեցողի շնորհքից:
Այսքանը հենց այնպես, դե մեկ-մեկ հիշելու համար.
Ո՞ւր է երկինքը, սիրտն ելած զավակին պատժելիս
Խամ չեմ նրա համակրանքը բռնելու համար,
Բայց կբռնեմ ինձ — առանց արյան լեռը հիշելիս:
Ի՛նչ լեռ, ի՛նչ հեքիաթ, ի՛նչ բան. ո՞վ է մոլորյալ խաղում,
Ոնց սերս, որ օճառվեց ու պլստաց դեպի ուր,
Հասցրինք գոհանալ տեսիլով, որ լավ է կաղում,
Եվ ծուռ դառնալու համար ունենք հրեշտակի փետուր:
Չկա, ա՛յ մարդ, չի եղել և ոչ մի սրբազան հող,
Որտեղ քո ոտքերը կոխել են սրբազան դողով,
Դողացել են, երբ ափդ տեսել է պոռնիկի կող,
Որ հետո էլ նրան փոխես հուշարձան -կոթողով:
Դողացել են, երբ անգոր ես եղել պաշտպան կանգնել
Աղջկան անպաշտպան, որ ձեռքերդ մնան մաքուր,
Թե չէ ի՛նչ է ստացվում - լեռան տեսիլը հագնել
Ու մատներիդ խանդաղատանքը թողնել որպես կույր:

Վերջ, այդ մասին ոչ մի խոսք, հապա բաժակդ վերցրու.
Ճանապարհը, տես, մոլորեցնում է կնոջ նման,
Կամեցող սիրտը նույնիսկ ինձ պատմական է ցրում,
Որ գորահանդեսն ընդունեմ որերո՛րդ մենության:
Ասում են - կյանքը վատ չէ, դեռ սիրահարված էլ ես.
Ասում են - հա, հա, կաս ու չկաս, ինչ տարբերություն,
Իբր թե սրան-նրան անտեղի հարվածել ես...
Բայց, սպասեցեք, լռեք — էլի մի քիչ համբերություն:
Այս ցավին դուրս ընկա՞ծ ասեմ, որ ձեռք է դիպել,
Իսկ հողը, որ լեռան ստվերի տակ օր չտեսավ:
Մենք կրակի հետ խաղալիս գիտենք իրար կայել,
Ոչ ավել, ոչ պակաս՝ չունենալով օրվա լուրջ ցավ:
Աստված ինձ ու իմ խիղճը տվել ու չի խնայել,
Օդում մնում է մի հարց - տե՞ր ես, պատասխան՝ լրիվ,
Սպին մեջքիս հուշում է գինն ընկերության նայել,
Երբ ավերով ծածկելու դեմքս ունեցել է միֆ:
Է՛ հեչ, այսքան բանը, լեռն իգուր է կշտամբում,
Պե՞տք է, մի բուռ հող նրան հասցնեմ լավ խորունկից,
Հայրիկ, տո՛ւն թող ինձ, հավատա՛, ես էլ եմ շտապում,
Անուն հանած ունենալ հարբեցողի շնորհքից:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՔԵՁ ՀԱՄԱՐ

Ամեն օր փրկում եմ ես ինձ արյան կախարդանքից,
Դեպի տուն գնամ, Սաթենի՛կ, քանի մենակ եմ դեռ,
Սպասումը դու տար պատահական մեկի ճանկից,
Մի՛ անիծիր ահա, որ չեմ թողել աչքը թարթեր:
Մատ-մատ հաշտություն եմ նշմարել իմ բաժին հոգում,
Տատանվում եմ հիմա թողնել հառաչանքի նկար,
Արյունն իրենից դուրս եկած նոր սահման է հոգում,
Միայն թե դու այսօր այն ես, ինչ մի ժամանակ կար:
Քամին քո փողոցից հայացքս լիզելով տարավ,
Որ գնամ դեպի ո՛ւր՝ մութի հետ խառնված անտես,
Բաժանումն ընկել է կոկորդիս մեջ որպես ծարավ
(Ամոթից կկանգնեմ մի տեղ, որ կանգնելս ատես):
Փակագիծը բացիր թիկունքից իմ հուսահատված,
Ես եմ իրար խառնել հոգսի օրենքները բոլոր,
Սակայն վերջին անգամ երագում մնա մի հատված -
Ձի էր, ձիու մասին մի երգ, դեռ չավարտված օրոր:

Բառերդ շրթներկոտ գալիս, միշտ շուրթերս են փակում,
Ո՞ւմ համար է երգը ծնվելու ինձանից առաջ,
Ահա հավաքվել են... զինի... ու պարպում եմ կում-կում,
Այսքան համբերություն ու համբերության ա՞ջ:
Երեկ մեկը այնպես ինչ-որ բան հիշեց ու գնաց...
Ժամադրման մայթը նեղ է երագողի համար.
Երբ մոռանալու են ինձ էլ պատուհանի դիմաց—
Ձեռքերին փշրվող կավ-տիրոջ նման միշտ համառ:
Մայթից մայթ անցնելիս սեր վերցնելու հնար չկա,
Որ հոգիս ունենար թեթև լինելու կիրակի,
Պատահական աչքից այն կողմ ինձ ոչինչ մոտ չի գա,
Եվ լռության մաշկը կխանձեմ հուշով քո կրակի:
Իմ աստղը տանում է դեռ ամեն օր ինձ փրկության,
Քանի՜ կյանք մոռանում եմ սիրել առաջին անգամ,
Դու չափսոսաս շիկնել գոնե հանուն մենակության,
Երբ ես այս ամենից բացի, այս ամենի մեջ կամ:
Ու կլինեմ դարձյալ, էլի հորս երրորդ որդին—
Երրորդության համար մարդու լռությունն է գալիս,
Քեզ թողնելու եմ իմ արյան վիճակի մեջ խրթին,
Որ աղ ու հաց լինի ցավը յուրաքանչյուր քայլիս:
Մառախուղը հիմա կիջնի, որ օրը մնա կույս:
Ես գիտեմ՝ ապրելու համը ելնում է այս ձևով,
Պատահարին է հիմա արձագանքում ամեն հույս,
Եվ թիկունքիս հայացքներին խաբում եմ անձրևով:
Տխուր մարդուն այսօր բարևելը մեղք է ու բոթ.
Սակայն ո՞ւր գնամ, Սաթենի՜կ, քանի հիշում եմ դեռ,
Այսպես հեռանալիս մնում եմ ես էլի ինձ մոտ,
Եվ ոչ ոք չի լինի, որ ինձ ստվերից իմ զատի:

ՍԵՐ՝ ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՈՎ

Ես նվիրվել եմ քամուն տվածիս ակնթարթին,
Երբ անծանոթ մի երգ գոյության ձևեր է փոխում.
Քեզ համար աչքս երբեք չդիպավ օրվա զարդին,
Չհավատացի, որ հրեշտակներ են շեմս կոխում:
Մի՛ ասա, թե մի փողոց այն կողմ ուրիշ կլինեմ,
Եվ դուռս բաց էր - քեզ ներս առնելու աստիճանի,
Հիմա ինձ համար երախտապարտը սիրող կին է,
Երբ զավակ ուզենամ օրհասիս — հետո ի՞նչ անի:

Ինչ անեմ ե՛ս, դրության տեր է դառնում ամեն իսկ,
Գիտես, հանկարծ բառեր չեն լինի սիրտս կոտրելու,
Դեռ առավոտվանից ընկերական շրջան մի պաղ
Թողել եմ չհասկացված մարդկանց ձեռքերին հլու:
Ո՞ր է տանում դժվար օրվա ընկերությունն անփորձ,
Որպես օտարությունից բերած խիղճ - հոգի ճնշող.
Ես վերադարձել եմ անկայուն, քմահաճ, անգործ,
Եվ եզակի բախտ եմ բերել մեկին — օրը նշող:
Ցուրտ է: Եվ ինչպես միշտ - մեքենաների տխուր հոսք,
Ինչ-որ տեղ հարևան է անտերանում որդու հետ,
Ես նրան ասում եմ օտարացա՛ծ ապրողի խոսք:
Ցուրտ է: Եվ ինչպես միշտ - գարեջրի անսովոր հերթ:
Հանուն մեծ սիրո ես քեզ կորցնում եմ, հի՛ն բարեկամ,
Եվ հավատում եմ այս գույգին - գրկախառնված քայլող,
Մի անտարբեր տանիքագործ Աստծո շատ էր նման,
Մի փողոցի աղմկարար շատ էր հոգի այրող:
Այս ի՞նչ ծաղր է, եկվո՛ր, ես ուզում եմ արյուն թափվի,
Այդ իմ քաղաքն է ծննդյան տոներին մերձեցնում,
Որ դատարկ սեղանի դեմ մեզանից մեկը խաբվի.
Այս ի՞նչ ծաղր է, եկվո՛ր, ամեն ոք զավակ է ծնում:
Պատերին քսվելով՝ հայրս է խորացել դեպի ելք,
Մեր տունը դարձավ արևի գոլ տված անմարդ վայր,
Հիշում եմ մեր թաղում աճապարարի խանդոտ վերելք.
Եվ ես նրա պարզուններն եմ հավաքում... արդեն այր:
Հին գերեզմանատանը սիրահարներ են հավում,
Ես ծնվել եմ, երբ հայրս հուսախաբ է արել մեկին,
Դեռ երեկ այրած տողերի սրբազան դողն է խաբում,
Իսկ այսօր երախտապարտ է նորից սիրող մի կին:
Ես ասում եմ, զավա՛կս, խնձորենին է բուրում,
Չկոտրես թներս անկայուն, քմահաճ, անգործ,
Այս կյանքում ամեն ոք իր ունեցածն է համբուրում
Երբ տեսնում է քամուն իր տվածը աչքերով գոց:

ԵՐԳ ԳԼԽԱՇՈՐԻ ՄԱՍԻՆ

Ես ասում եմ՝ ինչ հայտնություն է սա.
մարդկանցից ամենաերջանիկն է այսօր սպասողը:
Իջի՛ր, ճերմա՛կ իմ,
Ես սիրահարված եմ,

Երբ բոլոր ճանապարհները փակվել են
մուրացիկների, թափառաշրջիկների, անառակների համար:
Իմ վերջին փողերը չտանես, քամի՛,
մայրս հավատում է իմ ամեն խոսքին,
որովհետև գլխաշոր է ծածանում իմ հետևից,
երբ ես հոգնած տրորում եմ
մարդկանց այս տարվա ձյունը:
Իսկ այսօր ձյունը իջնում է էլի,
ես արդեն պարում եմ,
ես արդեն աղոթքի եմ ուղեկցում պաղող աչքերին,
որ ընդմիջտ մեղքի տակ մնացին
հեռու ավերում անվերջ խաբողի,
և իմ տաք արյունն է
ալիք-ալիք ողողում ավերքը նրա:
«Էլի բոլորն են խենթացել,
բոլորն են սիրահարված» —
Դուք՝ թափառաշրջիկներ, անառակներ, մուրացիկներ,
որ երգեր եք հորինում ամեն ինչի մասին,
գլխաշորի երգը թողեք ինձ:

ՏՈՒՆ ՀԱՄՆԵՄ

Թող տուն հասնեմ գոնե
որպես հոր անառակ որդի
և ապրեմ իմ պատուհանի դիմաց:
Հիմա վատ շրջան է —
թող տուն հասնեմ գոնե,
ինձ հայիոյելու չորս պատերի մեջ
և տաքօրինակ լռեմ պատուհանի դիմաց:
Հիմա ապրելու բան չի մնացել
այսքան տարվա լռությունից հետո,—
Երևի կարևորը առաջին քայլն է՝
երջանիկ
լինելու համար:
Թող տուն հասնեմ գոնե՝
հիշողությունից իջնելու պատուհանի դիմաց:
Հիմա էլ իջնելու տեղ չի մնացել
Երեկվա կերուխումից հետո,
և տրամադրություն չկա

արտասվելու:

Ախր գոնե տուն հասնեմ —

տուն հասած լինելու համար,

որ երջանիկ լինեմ պատուհանի դիմաց:

ՌԵՔՎԻԵՄ

ՆԱԽԵՐԳԱՆՔԻ փոխարեն

ՏԻԳՐԱՆ ԲԱԼՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մահն աչքիս կբարձրանա օրը ցերեկով,
Եվ կլսեմ հոգու թեթևության ձայներ,
Էլի երկինք կհմայեն ինձ երեքով,
Հանուն հոր և որդու և հոգու - մի գիշեր:
Թևաբախման փափուկ մի եզր ճակատիս,
Խռովարար քայլերիս մեջ ծաղկի սուգ,
Հեռու տեղի փսփսոցն են վառում այտիս,
Ու խաչքար են վերն պահում ձեռքերով զույգ:
Սրտի տազնապից վեր երկնքի փոխարեն,
Դեմք պսակազերծող ընկերական մի շարժ,
Թող բոլորը երազ իմ մահից փոխառնեն,
Թող շանը կանչեմ - դարձած ոսկորի շղարշ:
Ու շանը թողնեմ գուրգուրի ինձ ցերեկով -
Ուր որ է կթվամ նոր լվացված մարմին,
Ինձ գաղտնի ուսերին կտանեն երեքով,
Հանուն հոր և որդու և հոգու... և ամեն:
Էլ չեմ կարող այսպես նայել շան աչքերին,
Չէ՛, ելնեմ հալածելու անդունդի վրա,
Լուսնահաչը դնեմ շուրթերիս ճաքերին
Ու զմռսած մի մարմին ջրերի վրա:
Քիչ այն կողմ երկունք է մատներով ծածկելու,
Եվ մահացողի դուռը մնաց կիսաբաց,
Ահա հայտնությունը տուն վերադառնալու -
Արդեն մարմին առնող տաքածությամբ արբած:
Ահա ես, որ չկամ մոլորվածների մեջ -
Ձեռքերը զույգ կդառնան երկնքի դեմ ողբ,

Ինձ երեքով մեջտեղ կբերեն որպես վեճ,
Հանուն հոր և որդու և հոգու - դարձած հող:

ՏԵՂ ԱՐԵՎԻ ՏԱԿ՝ ԱՆԱՀԻՏԻ ՀԱՄԱՐ

Գնալով կատարյալ ձև է բոլոր ժամանակների համար...
Ես այսպես եմ մտածում,
որովհետև այս պատմության մեջ հետաքրքիր ոչինչ չկա:
...Եվ ի՞նչ կապ ունեն հարազատներս,
որ գլխիկոր քայլելու են դեպի տուն:
Շարունակ:
Տուն:
Քայլելու են դեպի...
Նրանք չեն տեսել երկինքը,
երբ ես երեխա էի,
չեն տեսնի, որ հայրս արդեն օրհնել է իմ սեղանը,
չեն տեսնի իմ մահը միլիոնավորների մեջ:
Որ երկրի քամին է, ա իս,
հարազատներիս թողել մնալու:
Ես ի՞նչ իմանայի, որ երկինքը ընկերոջ համար էր
(Լացի մեջ հետաքրքիր ոչինչ չկար, որ կանգնեցին կողքիս):

ՉԵՆ ՏԵՄՆԻ ԻՄ ՄԱՀԸ ՄԻԼԻՈՆԱՎՈՐՆԵՐԻ ՄԵՋ

Ես խոսելու եմ այս տարվա մասին, որպես ճանաչված տղա,
Ինձ գիտեն իմ քաղաքի բոլոր խենթերն անանուն, գիտեն,
Առավոտ շուտ նրանք միշտ արթնացրել են ինձ, որ լեռը միա,

Հետո արևի տակ տեղ եմ ունեցել կանգնելու մահի դեմ:
Արևը ծագում է բոլորի վրա, հրաշք է, թող մնա,
Այս տների սևության մեջ ալ կա, որ ասեն — եղել է կույս,
Ո՛վ հորինեց, աստվա՛ծ իմ, ողբերգությունը սրա ու նրա,
Եվ արթնացրեց հոգիս, որպես լքված շիրիմներին իջնող լույս:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԷՍՔԻԶՆԵՐ

Այս լուսաբացը հերարձակ
մոտենում է առանց սեթևեթելու:

Համբուրի՛ր մեկ առ մեկ
լույսի շերտերը զսպանակվող,
իսկ քամին կծափահարի խանձարուրի մեջ,
ու ջրերը մանկահասակ ծանոթ
խոսքեր կքչփչան,
որպես մխիթարանքի մենաստան մաքուր:

Ձեռքիս զոհվածի նշխարներ կան՝
ծրարում քնած,
և ինձ պարուրող նիհար հիշատակ—
ձնծաղիկի թիթեղյա վրաններից
բարձրացող եղերերգության:

Հալի՛ր ճակատդ ցավի պռունկին
Ու ոչնչացի՛ր դեռ չգոյացած,
երբ դրսում թափառող շրջմուլիկն անհաջողակ
կվերադառնա մի օր
կողոպուտի կամուրջներով -
քո ափսոսանքի ձեռքը կտրելու:
Ե՛կ, բախի՛ր աչքերիս սպասումը տոնական
ու պապանձվի՛ր
կուլիսներիս հարևանությամբ:
 Նույնն է պատկերդ,
 ցավս՝ առավել...

Ու ես շարունակ
իմ դեմքն եմ ուզում փնտրել
ջրափոսերիդ հայելու վրա —
լպրծուն մայթերին սայթաքող
անունների հոծ բազմության միջից:

Յնծության բացականչությունների հանդեպ
իմ մարմնի փեղկերը բոլոր
բացվում են միանգամից,
և երկինքը շնորհակալ դերակատարի նման
կոկորդն է մաքրում —
հին աստվածների վերադարձը
ավետելու հպարտությամբ:
Իսկ դու պահպանի՛ր
օրվա հետ նորոգվող
աստվածներիդ գույքը մեռած,

որ սիրո առաստաղը
ծանրանա մեզ վրա,
որպես ուշացած երաշտ - աղջկա ծոցում:

Նույնն է պատկերդ,
Ցավս՝ առավել...
Ահա արևդ վերընձյուղվում է
թոքերիս միջով,
և չարչարում է լռությունը ապաշնորհ -
մի բոլորովին անծանոթ մտերմությամբ:
Ի տես - ամլացող լեռան սրտից
ներս ցատկելու հարության գրգիռ,
նաև մոլեռանդ դեսպանի շուրթին արգելված գոտի,
իսկ մեռյալներին... արարողության հանգած հրաբուխ:
Մինչդեռ զարնանային էսքիզների ինքնամոռացում կա
նորահարս պատուհանիս մոտ,
Սակայն ես երբեք մարդավայել չեմ կրելու ուսերիս
երկնակամարն ուրիշի,
ակամա մի նոր մեղք չգործելու համար:

ԲԱԼԼԱԴ ՆԱԴԵԺԴԱՅԻ ՀԱՍԱՐ

Ուզում եմ, Նադեժդա՛, մի պահ ետ դարձնել
իմ բարի բախտը ճանապարհից առաջ,
քեզ մի օր մեռնող գնչուհի է ծնել,
քեզ մի օր թներիս տարել եմ հարբած:
Շուրջս կարմրել է սարսուռ առ սարսուռ,
Բայց մերկ չես արդեն, ես եմ դեռ երազում,
Նույն հուշն է սրտիդ պես շնորհում փակ դուռ,
Եվ ամեն ինչ իզուր թողեցի ներսում:
Դարձել ենք ծախու հերոս — կանք ու չկանք.
Իրարից հեռու հանկարծ դառնում շռայլ,
Ես՝ այստեղ, դու՝ այնտեղ. ավելորդ մի կյանք,
Կամ դափնի հանդիպման ու ներումի ժայռ:
Հավատս տարար քեզանից անտեղյակ,
Մի աչք հետևից նայում է մահացու,
Անհույս անցյալս — դեռ բաբախող երակ,
Ո՛վ է վերջ տալու — ուրիշի հարսնացու:
Այրված սրտերով եկել է մի քամի,

Երբ խղճով սառած աղերսում ես՝ գնա,
 Երաշտից ստույգ ինձ ոչ ոք չի հանի,
 Պարզ խոսելը սովորել եմ ակամա:
 Ժամանակն - ապարդյուն վրձնած մի բոց,
 Դիմագծեր է ճոճում մթնած աչքիս դեմ,
 Ու գետինը ջղաձգող սովերս հոծ
 Արու կող է ջարդված, Նադեժդա՛, գիտեմ:
 Իմ բարի բախտը մոռացումից փրկել
 Ու չբեր երկինքը պատժել եմ հույսով,
 Այսօր քո ձայնի գերեզմանը փակել
 Եվ արարում եմ ինձ համար ծանոթ սով:
 Ակացիան կնքահայր է օծել շոգից,
 Իսկ ամառը մեր՝ դուրս ընկած շան լեզու,
 Թվերի ձնհալ է հուշը կարեկից,
 Գրքացի առեղծված ձևերին հասու:
 Ապրելը հիմա լուսնահաչ է տխուր —
 Գեղեցկության համար հրդեհված քո դողից,
 Որ վատնել ես որպես ներոնական հուր
 Եվ մինչև վերջ թաքցրել պատահած գողից:
 Կշտամբելու եմ լույսը վրաս բացվող,
 Ծիծաղի ցնցուղ փշաքաղիի դեմքիս,
 Լուսամփոփի ողբ է հայացքդ տանջող,
 Երբ անհայտ մի գիշեր կանգնում է կողքիս:
 Ապշած թափորն առավոտի ճերմակած,
 Ես լքեցի լոկ մի պատառ ոսկորով,
 Գողգոթա է տանում սուրբը պսակած,
 Ոտքերին սանդալ ու սրտաշարժ գորով:
 Կարեկցելու չափ կատեմ դրոշն օրվա,
 Որ ջրերի վրայով տանում են լուռ,
 Անջատման ցամաքը, հոգ չէ, Նադեժդա՛,
 Երբ սրտիս հիշատակ է սեղմած մի բուռ:
 Մտրա՛կ պտտիր սրտիս մեջ ահաբեկ,
 Նահանջի փողհարին թող ինձ ամոքի,
 Դու ուրիշ առագաստում, ինչպես երբեք,
 Քամի կտենչաս... ու նավագի հոգի:

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ ԾԻԾԱՂԻ ՍԵՆՅԱԿՈՒՄ

Ցրտաճաք գիշեր է տափաստանը տրորված կարոտի,
 մենակյաց ջրվեժ, որ սողացող լույսի արցունքն է սակավ,

ահա ես անվերջ ճգնում եմ կապել անկման պարեգոտի,
հեռավոր ամռան ձեռքը բռնելով, որպես փշրվող կավ:
Քերծած երեսս կարթնանա հանկարծ կորուստից իմ փափուկ,
եզան քրտինքից աղի շուրթերիս չի դողա բառն անհամ,
գրպարտի՛ր քնկոտ երգեհոնն այս արքայագնի հետ մանուկ,
հիշելու համար երգիս մեջ կգտնես մի սուտ հարևան:
Երկյուղ կա փողոցում քաղցր զարմանքից քո զարմանալի,
տո՛ւր հիշատակի ազգանունը նոր մահացող գնչուհուն,
նրբափետուր կանչ է ու ոտաբոբիկ օրվա բանալի,
ավելորդ դրախտը խոսքերից կուշտ ծիծաղի սենյակում:
Դառնացած հարավ եմ հեռանում՝ ծխախոտս վառելու,
ես նույն հյուսիսի որդեգիր լինել չեմ կարող այսուհետ,
ժխորը գրպանիս վաղուց է դադարել թագ խոստանալուց,
դանակով ինձ սփռփիր ու մեղքը դարձրու անդամալուծ,
արյան գոլորշի ինձնից բարձրացած կեսօրն անհեթեթ:

ԳԱԶԵԼ ԿԱՍ ՏԳԵՂ ԱՂԶԻԿՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍԻՐՈՒՄ

Որբանոց կա սրտիս մեջ — սիրիի հանուն սիրելու,
Զգաս հանկարծ մերկ ու խեղճ — սիրիի հանուն սիրելու:

Առասպելը քո բաժին քանդիր օրը ցերեկով,
Զփնտրես սկիզբ ու վերջ - սիրիի, հանուն սիրելու:

Ձանձրույթն է լոկ ինձ մատնում և որտեղի՛ց այսքան մահ,
Վախից դարձել եմ հրշեջ — սիրիի հանուն սիրելու:

Հեքիաթն այսպես է եղել, տատոյ ստում է էլի,
Բաց չեմ թողել ոչ մի էջ - սիրիի հանուն սիրելու:

Գլխիս դիր քո ձեռքը պերճ, երգս հարգիր լռությամբ,
Հետո բացենք մի նոր վեճ — սիրիի հանուն սիրելու:

ՀԵՌԱՎՈՐ ՏԱՆԻՔՆԵՐ

Մատներիս տակ թավալվում է ճերմակ մի տենդ,
Ու աստղիս տակ օրորվում եմ քամուց հիմա,
Ամպրոպն ինձ հետ մեծանում է չտես ու կենտ,

Եվ շուրթերս ճաքած սիրտ են դեռ ականա:
Պարանոցիդ ելևեջն է շնչում գինի,
Քո սուտ կանչի զառիթափն է ձեռքիս ընկել,
Իսկ երկնքից հայհոյում է մի ներքինի,
Ջրհորի դեմ ինձ է ուզում ահաբեկել:
Եվ ընկրկման վիհով անցած վերքը սուսեր,
Ջահել դավ է - ծեր շշուկի խրճիթ հասած.
Կեսօրն անփույթ կատակները գոնե սուզեր,
Որ գիշերը չհիանար ոչինչ չասած:
Նախատինք կա մաշված դեմքին իմ հավատի.
Մնա կողքիս շնչակտուր արյունով էգ,
Փետուր չես դու ծամածովող կույս Նայադի,
Թեև մեծ եմ երգից իմ այս որպես սիրերգ:
Մաքուր է քո փլուզումը մինչ լուսաբաց.
Վիթ չի իջնի սևահողին ինձնից թաքուն,
Էլ չեմ կարող ապրել այնպես կամաց-կամաց.
Երբ մորեմերկ թեժ բնագոյն է հանկարծ ճաքում:
Օտարոտի կանչում է մի ծանոթ դահիճ,
Թագուհու պես դուրս է պրծնում մի կաղ բոշա,
Եվ շուրթերս — ճաքած սրտի մի վերջին ճիչ,
Քանդակում են խեղդող կրքի ատամնաշար:
Երդման անուն ասա նորից — անտերանա,
Դու քամուն նե՛րս քաշիր որպես ընտիր նժույգ,
Երախակալ չունի քամին, որ թերանա,
Ծիկրակում են արդեն պահի աչքերը գույգ:
Սահի՛ր ուսիս թագաժառանգ քո գիշերով,
Որ շուրթերս — ճաքած սրտի երազի վերջ,
Անմահանան — արձանացած քեզ հուշելով,
Հետո, որպես պայման, թողնեն ընդվզման վեճ:

ԼՈՒՍԱՆԸ, ԵՍ, ՀԱՅԲԵՆԻՔՍ

Ցասման գավիթը լցվող ծաղկատար քամի
Ու լուսան է նենգ օրվա հացիս դրոշմ դրված,
Ցավն ինձ մատնում է կրակին անզգամի,
Գրգռում ծխի պառավ մարմինը սրված:
Դու փսփսա քո ընկեցիկ կարոտն այրի,
Ինձ իմ մահվան բոթն է խանձել, ու դեռ խոր է...
Ձայնս ցրիվ տրորվում է այսպես վայրի,

Ու հավաքվում հետո որպես մի նախօրե:
Աչքդ պահիր ընդելուզվող լեռանը բարկ,
Հույս լափլիզող բացատը տար նրանից ներս,
Ահա շուրջդ կապկպել են չեկած մի փառք:
Քո հայրենի ծիրանին է դարձել աղերս:
Կաթը քամող մնջախաղ է ամեն փախուստ.
Սրթսրթում է բերանը փակ հողը — աչքիս,
Վթարն եկավ, որ միանամ ես արտաքուստ,
Եվ թագուհի ըմբոստանա հանկարծ կողքիս:
Որջո՛ց ցո՛ւյց տուր, քեզ հասկանամ, լինեմ ծուռթաթ,
Պատերը այս հրդեհել են տագնապը նեղ,
Անշրջանակ մահը որտե՞ղ թաղեմ հաստատ -
Հոգնած լեռն է կարկառում ինձ անկոչի մեխ:
Ես գալիս եմ՝ հողի ճիչով կողքիդ աճեմ,
Սգավերմակ տաս արցունքիդ հանկարծակի,
Հազար տարվա մեռելներիդ ետ նվաճեմ,
Որ իջնող աջը ապրողներիդ արձակի:
Լուսնի շապիկ պատառոտիր, ինչպես զրահ,
Մուրը նիհար շրջիր ոտքերիս արևկող,
Հերթափոխ է հիմա հուշի ամեն սրահ,
Լույս է խաղաղ բարեբանում երկիրն անքող:
Ի՛նչ տխուր է խորխորատը վերքից անհող,
Ես իջնողին թաթախում եմ կրակի մեջ:
Քամու հարճն է տեղ չհասնող ձայնը դարձյալ,
Որ ճերմակ մազ չունի իմ և հողի միջև:
Երկինք տանող լուսնափայլ հետքով աստծու,
Գտնեմ անհայտ մոլորյալներին Այբ-Բենով,
Անունները օտարից պահպանեմ ծածուկ,
Որ նայեմ օտարին հազար տարվա քենով:

ԱՅՆԿՈՂՄՅԱՆ ՏԵՄԻԼ

Անակնկալ է շատերին իմ փողոցը լուսավոր,
Եվ ես այսօր լուսավոր եմ ստրուկի պես տիրադավ,
Դեռ մանուկ է երեսառած երագողը կամավոր,
Մշո դաշտում բերքահավաք ազդարարող ձայն է թավ:
Թրքուհին է ինձ մոտ կանչում պորտաբաց ու հեշտասեր,
Ոտից գլուխ որդան կարմիր շալն է ուսին ծածանում,
Երևի թե չգնամ էլ վայելելու մի նոր սեր,

Երևի թե ինձ կմորթեն վանքը տանող կածանում:
Հերն անիծած, որ կարմրող աստծո դեմքի խիղճը ծեր
Մշո դաշտում գանգահավաք ազդարարող ձայն է թավ,
Եվ կանայք — խոսքերի պես մերկ — չգնահատված գիշեր,
Աչքդ չթարթած՝ ելնում են ուխտավորի օտար նավ:
Բայց սգավերմակ տարածող հոգիս լուսավոր է դեռ,
Իմ փողոցում փետուր թողնող ճերմակակուրծք հայուհուց,
Թեպետ թրքուհուն կածանից այն կողմ արժեր լինել տեր,
Թեպետ տխուր է, և կարծես վախենում եմ ես աստծուց:
Եվ հետո մայրս է տուն կանչում արդեն վերջին ընթրիքի,
Եվ ես այսօր լուսավոր եմ ստրուկի պես տիրադավ:
Ես ի՛նչ անեմ, կյանքն է մղում մի սիրային ինտրիգի,
Որը չգիտեմ՝ արդյոք ի՞նձ, թե՞ թրքուհուն տիրացավ:
Մի հասկացող երկինք լիներ ինձ ու քեզ վրա հեռվում,
Լեռ են նետել աչքիս վերքին - մինչև մորս կարկառած,
Այս աշխարհի մեջ երկունքի ցավերով են դեռ գերվում,
Իսկ անպտուղ իմ ցավերին երկրից դուրս ի՛նչ աղ ու հաց:
Բայց սգավերմակ տարածող հոգիս լուսավոր է դեռ
Իմ փողոցում փետուր թողնող ճերմակակուրծք հայուհուց,
Թեպետ կուզեի թրքուհուն էլ եղբոր նման լինել տեր,
Թեպետ այս անգամ իսկապես ես վախենում եմ աստծուց:

ՄԱՀՄԱՆԻՆ

Եթե մեկը խոսում է
Ճղակտոր ծառերից, կանգնած,
Դաշտում ցրված քարերը տեր կունենան,
Իրենց գլխով մատաղ սերունդի մի անունից:
Այս ինչպե՛ս է հոսում գետը,
այս ի՛նչ մարդիկ են մոռանում գործն հայրերի
մի սուտ բերքով,
քամու բերած, քամուն տված երգով,
Այս գիշեր քո բաշխած արևը վկա քարին,
սև, ինչպես մարդու ստվերը ջրին
ու ջրին հանձնած սև գործերը մարդու,
որ մի բերան... լռում է:
Լռում է ուրիշի հողում, երկինքն օտար,
երբ մեկը խոսում է, օտարը ես եմ...
Ես եմ օտարը.

քարերին մատաղ գլխի պես —
սերունդի մի անունից հարցական գլորվող:
Սրա համար պարտքի տակ
հայր ունեմ՝ օջախ շենացնող —
այրված շեների ու կարոտի ծխից,
եղբայրներ — յոթ աղբյուր բխեցնելու
բոլոր սրբավայրերում մեր,
ունեմ մայր —
մեկ անգամ ինձ աշխարհ բերած:
Եվ ինչ անունից էլ խոսես,
ում անունով էլ կոչվես թաղվելու համար,
սահման փնտրիր հողի ու երկնքի,— դու ես,
սիրածի ու գրկի... սերն է,
թիկունքի ու դանակի,—
ուրեմն խաղաղություն է ամենուր:
Բայց ինչպես է հոսում գետը,
որ իմ երակներում դարձած կարմիր գիծ —
մի սուտ բախտով
մարդու լացը բռնելու է գաղթով:
Աչքերդ չո՛ր մնան, աշխա՛րհ,
մանուկներդ լիքը երկրեերկիր:
Այստեղ սահման է,
ու երբ մեկը խոսում է, օտարը ես եմ:
Ես եմ օտար
քարերին մատաղ գլխի պես,—
երազ տեսնեք, սարեր — ծովեծով,
Ձեզ համար պարտքի տակ
հայր ունեմ՝ օջախ շենացնող -
այրված շեների ու կարոտի ծխից,
եղբայրներ - յոթ աղբյուր բխեցնելու
բոլոր սրբավայրերում մեր,
ունեմ մայր-
մեկ անգամ ինձ աշխարհ բերած,
որ կյանքի ու մահվան սահմանը կոչեմ օտարություն:

ԾԱՐԱՎ

Տալից է դառնում հողը վայրենի,
Մարող խաչքարին ջո՛ւր տվեք մի պուտ,

Ծարավը վաղվա — պարտապանաց գութ,
Տապից է դառնում հողը վայրենի:

Միրտս դուրս թափվող փողփողէջ գինի,
Եվ լեզենդի մոր փեշի տակ մի ճուտ.
Տապից է դառնում հողը վայրենի,
Մարող խաչքարին ջո՛ւր տվեք մի պուտ:

ՋՐՀԵՂԵՂ

Ես վերադառնում եմ՝ գիշերային թափվող բները գրկիս մեջ,
և ջրհեղեղն սկսվում է անեծքով որդեկորույս մայրերի,
այստեղ է այն քաղաքը, որտեղ ջրերը դեռ իջնում են անվերջ,
այստեղ է քրոջս խորունկ վերքը դարձել անգին բեռ սայլերի:
Հիմա ամեն ինչ միանգամից դժվար է — ողբում են միշտ կանայք,
այսպես չեն թաղում - շփոթվում են ծերերը ջրերին նայելով,
ինչո՞ւ - աղաղակում են մոլորյալները — աչքերի դեմ ցամաք,
և ես վերադառնում եմ, և ես վերադառնում եմ հմայելով:
Ահա անմեղ արյունը, որ հազար տարին մեկ անգամ է թափվում
(քրոջս զավակները ամեն օր լուռ կանգնում են ճանապարհին),
երբ անցնող սայլերի ալվան բոցերից սիրահարներ են խաբվում,
ուղեկցողների հուսահատ ճիչերը շողշողում են տապարին:
Եվ իջնում են իմ գրկից խոր գիշերվա մանուկները որբացած —
ես չկարողացա ձայն տալ անմեղ ու մեղավոր ճանաչողին,
որ խելագարվի որդեկորույս մայրերի թների տակ բացած,
որ կարողանա տղամարդու պես պարպել ձեռքի մի թաս օդին:
Նորից թաղում է, նորից մենակ է, նորից կանչում է քույրս ինձ,
բայց ես չեմ հավատում, բայց ես շրջվում եմ հանկարծակի գրկելու,
Եվ ահա... ահա, ինչ-որ մեկը քրքիջով կախվում է իմ ուսից,
Հետո հավատում, որ ինչ-որ սիրո կորցրած բառերն եմ կրկնելու:
...Ես կտանեմ քո ընդհատված կյանքի ողբերգությունը միայնակ,
որ ավերակների վրա կանգնա՝ ծխոստովանեմ սերս դժվար,
քոնն է լինելու անցնող սայլերի անգին քարերից մի մանյակ,
քեզ են սիրելու կանայք, ծերերը և մոլորյալները շվար...
Բայց ես չեմ հավատում, և ինձ տանում է բնագդը ուղեկցողի,
որ գիշերվա մեջ վառում է մոմերը կախվողի արդար դեմքին,
դեռ իջնող ջրերի վրա պտույտի բոցն է թներ ունեցողի —
ջրերի վրա թները մոխրանում են քրոջս խորունկ վերքին:



ԼՔԿԱԾ ՏԱՆ ԱՌԱՎՈՏԸ

ԼՔՎԱԾ ՏԱՆ ԱՌԱՎՈՏԸ

Երբ զավակները լքում են տունը, որպես միակ խոսք աշխարհում
և մարգարեն է մոռանում ճանապարհը ազատ հոգիների,
կույր երգիչները թախծում են իմ սիրո համար ու ապաշխարում,
հավատում են, որ մեռնող այն հերոսը ինձ խենթի պես կների:
Մեռած այն հերոսը մթնով բերում է մոռացված մի ժամանակ.
և աչքերիս խոնավ տափաստանից ձիերին քշում են անքուն,
ես հիմա փակ եմ, ինչպես քո դժվար օրերը թաքցրած նամակ,
ես հիմա փակ եմ, որ անդունդ ունենա ձիերի ամեն անկում:
Գուցե բաց ծով են հեռանում առաջին լքվածները մեծ սիրո,
և ամեն օր հեռացողների խոսքեր են մարգարեի մասին,
որովհետև որդուս համար հայր եմ թիապարտի անհույս սիրով -
այսքան արագ կորցնում են միայն, երբ լինում են ինձ հետ միասին:
Ո՛ւմ եք թողնելու, կո՛ւյր երգիչներ, ձեր երգը ավիին մնացածի,
սիրածս կանանց գաղտնիքը կմեռնի - հենց նրա՛նց երկար հիշելուց,
միայն բաց ծովում են փրկություն կանչում շապիկով մահացածի
և գոչում վեհերոտ — հեռու երկրում լքած տանը գիշերելուց:
Մեռած այն հերոսը այս վիստ ճիչերը ծածկում է ինձանից,
մահապարտներ են, մերժվածներ, իսկ ես ոչ մեկից լինել չեմ ուզում,
ո՞վ ասաց, որ նրանց ողբերգությունը սկսվում է իմ ձայնից,
ո՞վ ասաց, որ անտերունչ լուսնահաչը միայն տիրոջն է հուզում:
Այս ի՞նչ անքնություն է մարդկանց մեջ - մահվան բոթերով ետ դարձող:
Զկա ճշմարտությունը իմ կյանքի, որ ելնեմ որպես իմաստուն,
մինչև առավոտ ազատ հոգիներ են թներիս վրա թախծող,
և վերջին ողջագուրումները դառնում են հազար տարվա խոստում:
Խաղաղվե՛ք, արցունքո՛վ խաղաղվե՛ք ջահելության համար ձեր կանանց,
Այսպես մարդկային է չճնված մանուկներին լինել թանկ անուն,
Աչքերիս խոնավ տափաստանով մոտենում են ձիերը կամաց,
Եվ տունը լքող զավակները, որպես միակ խոսք են թանկանում:
Երբ օտարն է հոգնում հիշողությունից
ամեն ինչ կորցրած մարդկանց,
և խարույկների վրա փրկություն փնտրող ինքնակոչներ են բոլորը —
երկրում ստվերները թանձրանում են
որդիների ու դուստրերի ամենօրյա մաղթանքներից,
և ծանր կոպերով ես ծածկում եմ մի ողջ աշխարհ:
Գերեզմաններին վերադարձ չկա -
այդ մենք ենք վերադառնում հրաշքներ տեսնելու,
և մարմնով ծածկում մեր վեհությունը:
Ի՞նչ արյուն է կանչում շիրիմները բացող,
որ արձագանքում է ծովի վրա փոփող ստվերների պես

և խաղաղ ունայնությամբ տալիս վերջին կարեկցանքը -
մեր անգոր ձեռքերի դողով
և աչքերով փակվող:
Ի՞նչ մահ է կանչում դեպի անծանոթ ափեր
ու, թվում է, լուսավոր խոսք երախտիքի
և ի՞նչ ձայն է ավետիս բերում,
երբ ծնվում է ծովում մարմնի ալը:
Այսպես սրսփում են բարդիները — շիրիմները պահած,
այսպես տարփողում են մաղթանքները
մեր խեղճ աչքերը հրաշքների դիմաց:
Մի՛ հեռացեք - կորած ափեր ունենալու,
երկրում ստվերները չոքում են՝ անտունի մարմինը անարյուն ծվատելու,
և պահպանում գերեզմանը ծովային աղամանդով:
Ո՞վ է շաղ տալիս արձագանքները մեր վեհության
և մոտենում տրորված հողի փորձով,
մոտենում է՝ մնալու որպես երախտիքի խոսք -
մեր շուրջը մոլեգնող արդարության կոչերի ներքո:
Մի պահ խաղաղվում է ծովը,
և մնում է հոգնած մեկը — մեզ հիշելիս,
մեզ հիշելիս բոլորը սիրում են միայնակներին,
բայց արևահար դեմքերով այս մարդիկ
երկիր են վերադառնում խումբ-խումբ -
մեզ ո՞վ է ձայն տվել այս անտերության մեջ,
երբ դեռ խտանում են որդիների ու դուստրերի շարքերը մաղթանքներից:
Մեր գլխին փլվող երկնքի պես գտնում ենք աղամանդները նրանց
և նորից ծով հեռանում նույն ճանապարհով:
Գերեզմաններին վերադարձ չկա —
այդ մենք ենք վերադառնում հրաշքներ տեսնելու:
Անդունդի վրա կախված մի արև ենք փրկում
և ծունկի գալիս պաշտամունքի համար,
մեր օրերը դադարում են լինել խիղճը կորցրած,
բայց բոլորի սրտերում կա մի ցանկություն,
երբ ընտրում են անդունդների վրա հանգչելու սաքսափը:
Ամեն ինչ կորցրած մարդիկ չեն մեռնում,
և օրեցօր թանկ է դառնում նրանց գոյությունը,
բայց երբ օտարն է հոգնում հիշողությունից,
մենք հարց ենք տալիս —
ինչո՞ւ են շաղ տալիս մեր վեհության աղամանդները:
հենց հիմա ջրերին իջած իմ ձայնն է լսվում -
ես էլ եմ հոգնում, երբ ստվերները բաժանում են իմ կյանքը:
Եվ ծանր կոպերով ես փակում եմ մի ողջ աշխարհ:

Մենք այսպես ենք եղել ժամանակի մոխիր,
մեր ուժը կորցնելու համար ապավինել հիշարժան դեպքերի ու դեմքերի
և այնպես հեշտ են ջրերը մեզ տարել մայրական գիրկ:
Հիմա ինձ հսկում է վերքը ամենօրյա՝
ամայի հոգիների պարզևը ներհակ,
որ լեցուն է իմ թևերին իջնող աղավնիներով,
երբ մի պահ մոռանում եմ ինքս ինձ:
Ի՞նչ պարզ է հեռու տեղից բերված մոխիրը մի բուռ:
Ես տեսնում եմ խոտերի ընդհատումը ամենօրյա
և ճակատս հպում կրակներին ծովի վրա,
ծովի վրա հուրհրացող:
Մի գիրկ կարոտ ունենալուց
և անցումը հիշատակին
երկար կյանք է ինձ խոստանում:
Հետո գալիս է իմաստունը՝ տխուր դեմքով
անուն տալու այն հիշարժան մաղթանքներին,
որ ծնվել են ծովում,
որպես նվիրաբերում և հաց:
Ծանոթ նաշում ի՞նչ կյանք է, որ
տանում է մի աչք գաղտնիք,
և բոլորը նվիրում են ինձ աչքի լույս
և օրհնում են ծնունդը բոլոր այրերի:
Այդ նրանք են այսպես երկար գնում դեպի սկիզբ,
պատմում են զինով և օրորվում:
Գերեզմաններին վերադարձ չկա —
այդ մենք ենք վերադառնում հրաշքներ տեսնելու:
Ես տեսնում եմ աշխարհի ջրերը բուռ-բուռ պարպող նախնիներիս
և աչքերս թողնում ջրերի մեջ — աստղերի պես,
որ հսկում են ոգեշնչող ստվերներին:
Այս օրը միշտ եղել է նրանց կյանքում ծխոտ մայրու նման,
և հանդիսավոր բարձրացել են աստիճաններով - երկրպագելու,
այս օրը եղել է զանգակատուն,
և դրոշները տխուր կախվել են ջրերին,
հետո ծածկել են մեզ:
Մեր հաղթանակները շատ եղան ուրիշների համար,
ստիպեցին պարզել գուրը քարերի մեջ ծնկաչոք ու արյունոտված,
և մենք մարմնով ծածկեցինք մեր վեհությունը:
Որքա՞ն ուռչում է քամին մեր կրծքի տակ,
այնքան հզոր է ձայնը առասպելական:
Մի հին աշխարհ է վերածնում իմաստունը տխուր դեմքով,
որտեղ ապրել են ու սիրել

այս մարդիկ - խումբ-խումբ երկիր վերադարձող:
և բնական են եղել շուրթերը աղջիկների,
երբ համբուրել են արյուն-արյունի,
և բնական են եղել թևերը տղամարդկանց,
երբ թողել են հողը-հողին:
Ես տեսնում եմ՝ աշխարհի ջրերը բուռ-բուռ պարպող նախնիներին
և ծարաված սրտերի համար ծխոտվում է մայրին,
երբ օտարը հոգնում է հիշողությունից,
մի հին աշխարհ անծայր ճանապարհով
պտույտ է թողնում զանգակատան աստիճաններից հանդիսավոր իջնելիս:
Մեզ այսպես հորինեցին, որ կարողանան ճանաչել իրենց սկիզբը
և միակ պահապանը դարձանք փրկվածների:
Այսօր մենք ապրում ենք եղբոր տխրությամբ,
ամեն ինչից հեռու որոնում ճանապարհը կովի,
և ովքեր ճանաչում են իրենց մարմինը—
բաց դռների մեջ հյուրընկալության ընտրանք են գտնում:
Այդ ո՞ր օրենքով դու սկսում ես աճել երազի թևերով
և քամահարում օրերի վաստակը հնչուն,
դու միայն պաշտպանում ես պատիվը լքվածի,
և ինքդ լքվում կորուստներից հետո:
Ինչո՞ւ են մեր շուրթերը կարոտում խոստովանության,
երբ անհնարին է ապրել երկրի նշաններով —
մի օր հեռանալու են օտարները այս հիշատակից,
և աշխարհի հետ կմնանք մենակ:
Հեռու չէ ժամը որդիների ու դուստրերի անսուտ,
երբ կփնտրեն որպես անհետացող սերունդ
և երգեր կհորինեն վերջին կանչերի մասին,
որ մարում են չոքած աղոթողի նման:
Գերեզմաններին վերադարձ չկա —
այդ մենք ենք վերադառնում հրաշքներ տեսնելու:
Մեզ հորինեցին, որ իրենց համար սկիզբ ունենան
և այսօր միակ պահապանը դարձանք փրկվածների,
եղբայրներս ուխտավորի պես եկել են, որ մնան
ազատության մեջ արդար արյան կանչից զրկվածների:
Եկել ու ասում են՝ հիշեցե՛ք տաք օրերն հարավի,
երբ հայրական մերկությունը զավակը չխնայեց...
Եվ խնայողը ապրեց գուշակությա՛ն միշտ ծարավի,
անմահության մեջ ամեն ինչ կորցնելով՝ մեզ հմայեց:
Եկել ու ասում են՝ հորինողը այդ մենք ենք, որ կանք,
Երբ վերադառնանք ավերակները - նույնն է ամեն ինչ,
մութը քեզ թևեր կտա, որպես խելագարվածի կյանք,

առաջվա պես կողքիդ կլինի հավերժական մի նինջ:
...Ես արթնացա ամբողջովին թաց... հենց այսպես է ծնել
երկիրը մարդուն, որ մի գիշեր գոռացել է — նա է,
մեր հազարամյա հիշողությունը, որ լեռը ծնել
և գաղտնիքը բացում է օտարին, որ իրենն է նաև:
Ես էլ եմ հոգնում խոստովանության մութ մաղթանքներից,
վեր կենամ ու տանեմ ավերակները հարազատին,
որ թանկ արյունը մնա իր տարած հաղթանակներից,
և ուզենա, որ աղոթող իր ձեռքերը ազատեն:
Նա, ով ուժ ունի հոժարակամ վախճան ընդունելու,
սիրում է գեղեցիկ եզերքներ, որ երբեք չի տեսել,
Ինչո՞ւ են հավաքվել հենց այստեղից սկիզբ դնելու,
Ինչո՞ւ չեն թողնում մեր հորինածը գոնե անտեսել:
Եղբայրնե՛ր, անհնար է նայել ազատության ցավին,
ամեն ինչ կորցրած մարդկանց համար չեն լինում հրաշքներ,
մի օր կմոտենան օտարները մեր լռած ձայնին,
և աշխարհի հետ կմնան հավերժին նայող աչքեր:
Ես ասում եմ ձեզ — գերություն է ընդմիշտ սկիզբ գնալ,
և խաղաղ երթերում հիշել թիվը սուրբ խաչքարերի,
մեր կորստին տեր է կանգնել հազարամյա մի քնար,
իսկ ձեռքերիս արյունն է դեռ մատաղացու գառների:
Հիմա մեր դարավոր սրտերը շիրիմներ են բացվող,
և հերոսներ են ելնում դժվար ճանապարհով քայլած,
կանայք են, ծերունիներ, քահանա... ու մի դաժան ողբ —
եկեք միանանք՝ դարձի բոլոր կամուրջները այրած:
Վեր կենանք, տանենք ավերակները հարազատներին,
որ քարացած սրտերն ունենան թեթևության արցունք
և բարի մաղթանքներ բաժանեն հարևան տներին —
ով տուն ունի, կունենա և հիշատակին իջնող ծունկ:
Եղբայրնե՛ր, անհնար է նայել ազատության ցավին,
ամեն ինչ կորցրած մարդկանց համար չեն լինում հրաշքներ,
մի օր կմոտենան օտարները մեր լռած ձայնին,
և աշխարհի հետ կմնան հավերժին նայող աչքեր:

Մարմնի ավը ծովում մանուկ չպարզկեց...
Հոգնած ճամփորդներ եկան երկիր
և հեռացան մարգարեանալու
մեծ սիրո մասին փրկվածների:
Նրանց, որ հիշում են միայն ջրհեղեղից առաջ:
Երանի՛ նրանց, որ ետ չդարձան,
քանզի անհայրենիք էին,

և մարմնի այլ ծովում մանուկ չպարզեց
Վահագն կոչելու:
Ինձ մի՛ մոռացեք, այրե՛ր երկրի,
որովհետև ես վերջինն եմ լինելու ավետիս բերելիս,
ուսմ արդեն չեն ճանաչելու փոշոտ, լքված ու անսեր
ճանապարհներին - վարձու մարդասպանի նշանառությամբ:
Եվ աչք աչքի բարձրանում է անհեթեթ մի մահ...
Երանի նրանց՝ ողբասացներին,
քանզի չգիտեն, որ փրկություն է:
Եթե արդար լինելու համար դուք հայրենիք ունեք, այրե՛ր,
Ինձ մի՛ թողեք ջրհեղեղից փրկվածների հույսին:
Այսպես ապրում են միայն
ճանապարհների ոսկին ու արծաթը նվաճող մարդիկ,
որոնց սարերում արյունարբուի դաժան ձեռքն է իշխում
և վանում հեռու մի տխուր աշխարհ:
Ձեր հետևից թողած կանանց լացուկոծը
միակ նվերն է բախտի ընտրյալներին:
Երբ մի հին աշխարհ իր իջևանատներում
անառակներ պահի ոսկով ու արծաթով -
ես էլ կիջնեմ որպես բախտի ընտրյալ,
իսկ ո՞ւմ է մնալու գերեզմանները պահպանող
ձեր խիտ շարքերի մարտակոչը,
Երբ ասում եմ, որ ապրել եմ այսպես, ինքնիշխան:
Մի պահ իջնում է ձեռքը ամենագոր
և վախվորած աչքերի արծաթն ու ոսկին
սկսում է հավաքել վերջին գողի պես:
Երանի նրանց, քանզի կույր են:
Ի՛նչ եմ անելու, տեր աստված,
ձեր ավերակների մեջ,
երբ վերադառնամ որպես ընտրյալ:
Ի՛նչ դժվար է, երբ մի հին ու տխուր աշխարհ
ինձ կարգում է տեր ու թագավոր
և հետևում ամբողջ կյանքում:
Ես գիտեմ առաջ պարզած ձեռքերի
անմոռանալի պահը տանել ընդմիջում
և զարմանքից քար կտրել վերջին թափորի հետևից:
Այսօր քեզ բարձրացնում եմ հիշատակի աստիճանի,
որ լաց չլինես, հարազա՛տս:
Մի հեռավոր ու ցուրտ օր
ես սիրեցի քո գոյությունը՝ խորհրդավոր ու անմատչելի:

Ա՛խ, այդ հայացքը աշխարհի չորս ծագերից
ինձ խենթացնում է առաջվա պես,
ուժ տալիս ապրելու:
Քո տխուր դեմքը նորից է դառնում երերող բոցի արտացոլանք,
ու թվում է՝ քեզ ճանաչել եմ ջրհեղեղից առաջ,
սա ցատկ է անդունդի վրայով,
սա դու ես անկման պահին:
Ափիս մեջ արյուն կա,
երբ լուռ հետևում է ինձ կյանքի վերջին նշույլը —
քո աչքերի մեջ:
Բա՛ց թողեք հեռանամ այս անկման հմայքից,
ես տեսնում եմ երեսը ծածկողի մահն ահագնացող
և հասկանում մոլորյալին -
ցրտից կուչ եկած:
Հիմա բոլորը սպասում են ինչ-որ հրաշքի -
ի լուր ինձ ու քեզ,
երբ ուշանում ենք լինել առջևում:
Երանի՛ ինձ, երանի՛ քեզ:
Ես ծունկի եմ գալիս տառապանքիդ դիմաց
և չեմ ուզում գրկել քեզ
սովորական ճշմարտության համար:
Մենք պե տք է վերադառնանք
վերջին թափորի ճանապարհով:
Քո տխուր դեմքը ես տանում եմ որպես ճակատագիր
և համակերպվում կորստի հետ ամեն քայլիս:
Իմ ունեցածը ծերացող սերունդ էր,
որ պատմություն չունեցավ պարզած ձեռքերի համար,
իսկ մութի մեջ երազելը կորցրած սեր է,
գտած ցավ:
Ահա բացվում է օրը քո անցյալի դժվար ժամին,
ու թվում է՝ հանդիպել ենք հայր ու որդի,
այսպես երկար կհիշեմ ես մի հառնող շիրիմ,
այսպես երկար կիջնի լույսը:
Վեր կենամ ու ընդմիշտ հիշեմ քո ձայնը, որ
խափանում է ճակատագրական իմ հարվածը
և կործանում քո սրբության պահպանողի հին արյունը,
որն ափիս մեջ զորանում է հոր և որդու հիշողությամբ:
Մի հեռավոր ու ցուրտ օր
դուռս բաց է երակի պես:
Սակայն ես կորցնում եմ,

սակայն ես կորցնում եմ սովորական մի ճշմարտություն,
որին պիտի հավատայի ամբողջ կյանքում:
Ու թվում է՝ քեզ ճանաչել եմ ջրհեղեղից հետո,
երբ փրկվածները լույսի պես իջան
քո... շիրիմին:
Երանի՛ նրանց, քանզի անշիրիմ են:
Ո՛վ ասաց, որ նրանց ողբերգությունը սկսվել է իմ ձայնից,
որ խափանել է ճակատագրական իմ հարվածը ու համբերել,
մայրե՛ր, ձեր որդիները աշխարհում միշտ գորանում են իմ ցավից -
ցավ, որ բաշխում եմ թեթև ձեռքով, որովհետև ինձ մայր չի բերել:
Ինձ մայր չի բերել, որ լինի սպասող հաղթական վերադարձի,
իսկ օտարն հիշում է ինձ, քանի դեռ պարտությունն է գոյության ձև,
Տե՛ր աստված, քո միակին անմահությունը որքան պիտի փորձի,
տո՛ւր ինձ քարանալու, հնա՛ր տուր քարանալու քարերի մեջ:
Երանի մի՛ տվեք անշիրիմներին, քանզի անմահ են, ո՛վ սուրբ ճամփորդներ հոգնած,
Եվ ո՞րն է ավելի մեծ, ես ձեզ եմ դիմում, գոյություն՝ նա այս համառ,
Թե՛ նրանից հետո ծնվող... Բայց ի՞նչ... Դեպի ո՞ւր անդարձ գնաց
մի հին աշխարհ: Ո՛վ ճամփորդներ, վերադարձե՛ք, այս անգամ ինձ համար:
Ահա աչք աչքի բարձրանում է անհեթեթ մահը երկրի որդու.
Նրան վերադարձ չկա, մենք ենք վերադառնում հրաշք տեսնելու,
երբ մարմնի այլ ծովում մանուկ պարզևի, դուք մնացեք արթուն՝
գոյությանն այս համառ և նրանից հետո ծնվող լույսին հլու:
Եթե սիրտ-ծննդավայր է,
ապա տաք արյուն է ալիք-ալիք ողողում ափերը նրա:
Մի՛ հեռացեք կորած ափեր ունենալու -
դուք Ագռավաքարի անմահը չեք, այլ պաշտպանը խենթ
ձեր իսկ հորինած հայրական անեծքի:
Աստվա՛ծ իմ, այս մեկը հորինել եք,
որ ոչ ոք չհավատա, թե ի սկզբանե էր անհայրությունը:
Եվ մեզ որբի վիրավոր արժանապատվությունը մնաց,
և մեզ հիշելիս բոլորը սիրում են միայնակներին,
որովհետև նրանց համար ոչ ոք չի հարցնելու -
ո՞ւր է եղբայրդ:
Եթե սիրտ-ծննդավայր է,
ապա ինչ-որ մեկը վերադառնում է իմ արյան վրայով:
Այսպես չեն սիրում և ոչ մի երկրում,
բայց հավատում են, որ կա,
կա մի առավոտ, որ բացվում է իմ մահով:
Մի՛ մոռացեք ինձ, երկրի՛ այրեր,
որովհետև անմահությունը ձեզ համար այլևս չի ունենալու գաղտնիք,
և վերադարձը կլինի պայքար:

Հիմա ծանոթ նաշում ի՞նչ կյանք է, որ
տանում է մի աչք գաղտնիք,
երբ բոլորը նվիրում են ինձ աչքի լույս
և օրհնում ծնունդը բոլոր այրերի:
Ես առաջինն եմ թափված արյան թարմ հետքերով մոտեցել այս աշխարհին
և կորցրած հավատի համար հեռացել ծովով:
Ինձ սպասողներից մի քնքուշ ձեռք
ճանապարհների փոշին թոթափել է անհայտության վրա:
Մի օր խուժել եմ պատահական սեր գտնելու
քամուց օրորվող խրճիթները հին
և շփոթի մեջ թաց մարմինների ու վախվորած աչքերի ճիչը
նմանեցրել աստվածային կերպին,
որ երկունքի ցավով սկսվի տուն չունեցողի տխուր վախճանը:
Մի օր ինձ սպասողների մեջ աղմկելու է ծովը,
և հիշաչար մարդիկ չեն հեռանա
այս անհույս պատկերից,
որ կախված է ամեն մի հարկի տակ:
Մշուշոտ աչքերով մի օր կմտնեմ շեմից ներս,
և ծերացած մի ձեռք ինձ հագիվ վերջին օրհնությունը կտա:
Օ՛, վերադարձե՛ք այս փոքրիկ երկրով,
և գերեզմաններին սրսփացող բարդիները
կգրավեն անհայտ մեկին:
Երբ ուշքի գա խուժող այրերի խումբը,
թաց մարմինները երկրպագելու են
զանգակատան աստիճաններով հանդիսավոր բարձրանալիս:
Եվ հավաքվում են երկիր վերադարձող մարդիկ,
և ոչ ոք չի տեսնելու բնական ուժի թողած հետևանքները
նրանց սրտերում,
և որպեսզի հասնի օրը ամենայն ցավի,
նրանց թներն են մեզ անջատելու
օտարման այս ջահերից,
որ վառել է քնքուշ մի ձեռք:
Սակայն ինձ այս ջահերով տարեք դեպի այն խավարը,
որտեղից վերադառնում են մշուշոտ աչքերով շեմից ներս մտնելու:
Ես ապրել եմ հին խրճիթների խոնավ պատկերով
և անհույս ծառայել աստվածային կերպին,
երբ անհնար է եղել միակը մնալ նրանց մեջ,
ովքեր դեռ վտարանդի են: